

Էդգար Գ. Հովհաննիսյան
Պատմ. գիտ. թեկնածու

**ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԶԱՆՔԵՐԸ
ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 1920–1930–ԱԿԱՆ ԹԹ.***

Բանալի բառեր – Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Հայկական սփյուռք, Կիլիկիա, Կիպրոսի հայոց թեմ, Սահակ Բ Խաչայան, Պետրոս արքեպիսկոպոս Սարաձյան, գաղթականություն, որբեր, հայապահպանություն:

Մուտք

Հայերը Կիպրոսում հաստատվել են հարյուրամյակներ առաջ և դարերի ընթացքում ստեղծել ինքնատիպ հոգևոր-մշակութային միջավայր¹: Կղզու տարածքում գործել են մի քանի նշանավոր հայկական եկեղեցիներ, իսկ 19-րդ դարում՝ նաև ուսումնական հաստատություններ: 1878 թվականից Կիպրոսը գտնվում էր անգլիական ենթակայության տակ, բայց մինչև Հայոց ցեղասպանությունը և Կիլիկիայի հայաթափումը կղզում մեծ չէր հայության թիվը:

Հայ գաղթականների ներհոսքը Կիպրոս մեծացավ հատկապես 1921 թ. Կիլիկիայի հայաթափումից հետո, որի հետևանքով մի քանի տարում Կիպրոս ժամանեցին շուրջ 8–10 հազար հայեր հիմնականում Կիլիկիայից, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի մի շարք բնակավայրերից: Նրանց մի մասը, չհարմարվելով տեղի պայմաններին և չգտնելով մշտական բնակության համար համապատասխան պայմաններ, հեռացավ եվրոպական

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.04.2021: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 20TTSH-043 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

¹ Տե՛ս **Բակուրյան**, Կիպրոս կղզի, Միկոսիա, տպարան Ազգ. Կրթարան-որբանոցի, 1903, էջ 49-50: **Ալաթյաձեան Ա.**, Կիպրոս կղզին, Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, 1927, Փարիզ, տպարան «Մասիս», էջ 210-212: **Ալիմեան Ի. Ն.**, Հայ Կիպրոս, «Հանդէս ամսօրեայ», 1937, N 6-8, հունիս-օգոստոս, էջ 378-381:

երկրներ, ինչպես նաև Սիրիա և Լիբանան: Այս ամենի հետևանքով կղզում վերջնականապես հաստատված հայերի թիվը հասավ շուրջ 3500–4000-ի²: Ուստի 1920–ական թթ. սկզբներին ամբողջությամբ փոխվեց կղզու հայկական համայնքի պատկերը:

Հաղթահարելով թեմական «տագնապը»՝ 1920–ական թթ. կեսերին վերակազմավորված Կիպրոսի հայոց թեմը վերջնականապես անցնում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության իրավասության ներքո: Թեմի առաջնորդը Պետրոս արքեպիսկոպոս Սարաձյանն էր, որը Կիպրոսում հաստատվել էր 1920 թ.: Վերջինս ստանձնեց թեմի առաջնորդությունը՝ ղեկավարելով մինչև 1940 թ., երբ՝ Սահակ Բ Խապայանի մահվանից հետո, ընտրվեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս: Պետրոս սրբազանի ջանքերով 1920–1930–ական թթ. վերակազմավորվում է կղզու հայության համայնքային կյանքը, վերաձևավորվում են տեղի ազգային իշխանության մարմինները, հաստատվում է թեմական կանոնադրություն³: Սկսվում է նոր շրջափուլ Կիպրոսի հայկական համայնքի կյանքում: Կիպրոսի հայոց թեմը և տեղի թաղական խորհուրդը, որը հետագայում փոխարինվում է թեմական ժողովով, հսկայական աշխատանք են իրականացնում կղզում հաստատված գաղթականության սոցիալ–տնտեսական և հոգևոր–մշակութային կյանքի կազմակերպման ուղղությամբ, որի գլխավոր նպատակը ուժացման գործընթացների կանխումն էր:

1. Հոգևոր–կրոնական կյանքի կազմակերպումը

Կիպրոսի հայոց թեմը նախևառաջ իր առջև խնդիր էր դրել համախմբել կղզու հայությանը եկեղեցու շուրջ, ինչպես նաև քրիստոնեական արժեքների տարածման և ամրապնդման միջոցով փրկել տեղի տարագիր հայությանը ուժացումից:

Կիպրոսի տարածքում հայկական եկեղեցիներ կառուցվել են՝ դեռևս միջնադարից սկսած⁴: Բայց Կիպրոսի հայկական համայնքի պատմության նոր շրջափուլում ոչ միայն վերակառուցվեցին և վերագործարկվեցին նախկին եկեղեցիները, այլև կառուցվեցին նորերը:

1931 թ. Պետրոս Սարաձյանի պատրաստած տեղեկագրի համաձայն՝ Կիպրոսի թեմում կային հինգ եկեղեցիներ՝ 1. **Սուրբ Աստվածածինը**, որը

2 Այս մասին մանրամասն տես **Հովհաննիսյան Է.**, Կիլիկիահայության հաստատումը Կիպրոսում և Կիպրոսի հայոց թեմի վերակազմավորումը 1920–1930–ական թթ., «ՎԷՆ» հանդես, 2021, N 1, էջ 226–261:

3 Տես «Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի», «Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ», N 4, խմբ. **Վարուժան արքեպիսկոպոս**, Նիկոսիա–Կիպրոս, «Հայկական մատենաշար Գալուստ Կիլիկեանկեան հիմնարկութեան», 2010, էջ 316–317, 460–463:

4 Պահպանվել են տարբեր տեղեկություններ ու հիշատակություններ Կիպրոսում գոյություն ունեցած հայկական եկեղեցիների և մատուռների մասին, սակայն քննարկվող շրջանում հայոց թեմի ենթակայության տակ էին գտնվում միայն վերը նշված եկեղեցիները: Մանրամասն տես **Բակուրյան**, նշվ. աշխ., էջ 49–114: **Ավայոյաձեան Ա.**, Կիպրոս կղզին, էջ 228–234:

գտնվում էր Նիկոսիայում՝ հայոց առաջնորդարանին կից, 2. **Սուրբ Պողոս** մատուռը, որը տեղակայված էր Նիկոսիայի ազգային գերեզմանատան մոտ և կառուցվել էր 1892 թ. պոլսեցի բարերար Պողոս Օտաձյանի կտակով⁵, 3. հանրահայտ **Սուրբ Մակարի** վանքը, որը գտնվում էր Նիկոսիայից 15 մղոն հեռու՝ դեպի հյուսիս-արևելք, 4. **Սուրբ Ստեփանոս** մատուռը, որը Լառնակայում էր գտնվում, 5. ավերակ և չգործող **Սուրբ Աստվածածին** եկեղեցին Ֆամագուստա քաղաքում, որը հայտնի էր նաև **Կանաչվորի վանք** անունով և կառուցվել էր 1317 թ.⁶: Այս վերջինը Կիպրոսի թեմի ջանքերով հայոց եկեղեցու ենթակայությանն է վերադարձվում 1935 թ.⁷ Լոնդոնից պաշտոնական թույլտվություն ստանալով, պայմանով, որ «...պետք եղած նորոգությունները կատարեն..., որպեսզի հնութենէն ունէ բան չի վնասուի»⁷:

Թվարկվածներից բացի՝ նախորդ դարերում կառուցված հայկական շատ եկեղեցիներ արդեն ավերվել էին կամ էլ տարբեր պատճառներով անցել այլ դավանանքի պատկանող համայնքների: Ուստի 1920-1930-ական թթ. համայնքի վերակազմությանը զուգընթաց աստիճանաբար վերանորոգվում և կառուցապատվում են թեմի ենթակայության տակ գտնվող եկեղեցիներն ու մատուռները, կառուցվում են նորերը:

Կիպրոսում հայկական ամենահայտնի եկեղեցին Սուրբ Մակարի վանքն է, որը հիմնադրվել է 560 թ. (որոշ տեղեկությունների համաձայն՝ 9-րդ դարում), կոչվում է նաև Կապույտ վանք⁸: Հիմնականում Սուրբ Մակարի վանքում, ինչպես նաև Նիկոսիայի հայոց առաջնորդարանում էին պահվում Կիպրոսի հայոց ձեռագիր մատյանները, որոնց թիվը հասնում էր ավելի քան վեց տասնյակի: Այդ ձեռագրերը հետագայում Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանը տեղափոխում է Անթիլիաս⁹: Դեռևս 1899-1905 թթ.՝ Կիպրոսի առաջնորդ եղած շրջանում, Սարաձյանի նախաձեռնությամբ կառուցվում են Սուրբ Մակարի վանքի Մուղայյան սենյակները¹⁰: Պետրոս սրբազանի ջանքերով Սուրբ Մակարում կարևոր նորոգություններ են կատարվում 1920-ական թթ.:

Բարերար Կարապետ աղա Մելքոնյանը 1925 թ. իր կտակով 1000 ոսկի է նվիրում դեպի վանք տանող ձանապարհի շինարարության համար: Որպես երախտագիտություն այս նվիրատվության՝ Սուրբ Մակարի ավագ

5 Տե՛ս **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 87: Տե՛ս նաև **Չեպեյան Ղ.**, Յիշատակարան կիպրահայ գաղութի, Անթիլիաս-Լիբանան, տպարան Կաթողիկոսության Հայոց Կիլիկիո, 1955, էջ 53:

6 Տե՛ս **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 70: Տե՛ս նաև **Ալպոյաձեան Ա.**, նշվ. աշխ., էջ 234: «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի»,, էջ 442-443, 459:

7 «Հասկ», մայիս-հունիս, 1935, N 5-6, էջ 46:

8 Սուրբ Մակարի վանքի մասին մանրամասն տե՛ս **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 91-106: Տե՛ս նաև **Ալպոյաձեան Ա.**, նշվ. աշխ., էջ 228-230: Տե՛ս նաև **Կիլիկիոյան Բարգէն**, Հայ Կիպրոս. Հայ գաղութը եւ Ս. Մակար, Անթիլիաս-Լիբանան, տպ. Ղարեվանուց Կաթողիկոսութեան Կիլիկիոյ, 1936, էջ 127-175:

9 Տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց Նիկոսիայի ի Կիպրոս, կազմեց **Ալիմեան հ. Ներսէս**, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1961, էջ 2:

10 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի»,, էջ 94, 397:

դռան վրա մարմարյա վիմագիր-հիշատակարան է ամրացվում¹¹: Կիպրոսի անգլիական իշխանություններն էլ իրենց հերթին տրամադրում են 1400 ոսկի՝ ձանապարհի շինարարությունն ավարտին հասցնելու համար¹²: Արդեն մեկ տարի անց ամբողջությամբ բարեկարգվում է ձանապարհը, որը մեծապես նպաստում է վանքի այցելուների թվի աճին:

Մի շարք այլ բարերարների, մասնավորապես Կարո Պալյանի նվիրատվությունների շնորհիվ վերանորոգվում է նաև վանքը, կառուցվում են կից նոր շինություններ, նոր զանգակատուն, ձեռք է բերվում նոր զանգ¹³: 1933 թ. սեպտեմբերին Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ի՝ Սուրբ Մակար այցելության առթիվ վերջինիս տրամադրած միջոցներով բարեկարգվում է վանքին կից հրապարակներից մեկը¹⁴:

Հետաքրքրական է, որ դեռևս 1901 թ. սեպտեմբերի 8-ին ի հիշատակ Մխիթարյան միաբանության հիմնադրման 200-ամյակի Սուրբ Մակարի արևելյան կողմում գտնվող բլուրը ազգային կրթարան-որբանոցի աշակերտները տնօրեն **Բակուրանի** գլխավորությամբ անվանակոչել էին Մխիթարի բլուր, որտեղ քարակոթող է կանգնեցվում՝ համապատասխան արձանագրությամբ: Տարիներ անց՝ 1931 թ., այդ ուսումնական հաստատության նախկին չորս աշակերտների կողմից բլրի տարածքը բարեկարգվում է: Նախկին քարակերտ կոթողը ձարտարապետ Կարո Պալյանի նախագծով փոխարկվում է քարե հուշարձանի, որի բացմանը ներկա է գտնվում նաև Սահակ կաթողիկոսը¹⁵: Աստիճանաբար վերականգնված կիսավեր Սուրբ Մակարի վանքը դառնում է կիպրահայության գլխավոր հոգևոր կենտրոններից մեկը:

Պետրոս սրբազանը ջանքեր է գործադրում նաև դեռևս 1116 թ. կառուցված կուսանոցի մաս կազմող¹⁶ Նիկոսիայի Սուրբ Աստվածածին եկեղեցու¹⁷ վերանորոգման ուղղությամբ, որը կառուցվել է 14-րդ դարում: Անհրաժեշտ միջոցներ հանգանակելու համար ստեղծում է 12 կանանցից կազմված հանձնախումբ, որը տարբեր միջոցառումների կազմակերպման միջոցով վեց ամսվա ընթացքում պետք է հանգանակեր վերանորոգման համար անհրաժեշտ 400 անգլիական ոսկի¹⁸: 1930 թ. հուլիսին հանգանակված միջոցներով մեկնարկում են եկեղեցու նորոգման աշխատանքները,

11 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Սելզոնեան հաստատութիւն», «Ղար» հիմնադրամ, խմբ. **Վարուժան արքեպիսկոպոս**, Նիկոսիա-Կիպրոս, տպարան Կայայան հրատ., 2011, էջ 274:

12 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 143, 432-433:

13 Տե՛ս «Արև», Գահիրե, 20 հոկտեմբերի, 1926, N 2333, էջ 2: Տե՛ս նաև **Կիլիկիոյան Բարզէն**, Հայ Կիպրոս..., էջ 267-296: **Զէպէյան Ղ.**, նշվ. աշխ., 27-29: «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 186-187: Տե՛ս նաև «Արաքս», Լառնակա, մայիս-հուլիս, 1927, N 64-66, էջ 2-3:

14 Տե՛ս **Զէպէյան Ղ.**, նշվ. աշխ., էջ 29:

15 Տե՛ս **Կիլիկիոյան Բարզէն**, Հայ Կիպրոս..., էջ 154-157:

16 Տե՛ս **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 61:

17 Նիկոսիայի Սուրբ Աստվածածին եկեղեցու մասին մանրամասն տե՛ս **Բակուրան**, նշվ. աշխ., էջ 61-71: **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 231-233:

18 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 192:

որոնք ավարտվում են մի քանի ամսից¹⁹: Ինչպես արդեն նշվեց, Սուրբ Աստվածածին եկեղեցու մոտ էր տեղակայված Կիպրոսի հայոց առաջնորդարանը:

Լառնակայում գտնվող Սուրբ Ստեփանոս մատուռը²⁰ կառուցվել էր 1913 թ. և նվիրված էր 1909 թ. Ադանայի ջարդերի զոհերին: Մատուռը կառուցվել էր Կիլիկիայում և Կիպրոսում կատարված հանգանակությունների շնորհիվ²¹: Մատուռից բացի՝ հանգանակության միջոցով նախատեսվում էր Լառնակայում գնել տարածք՝ հայկական գերեզմանատուն հիմնելու համար: Մատուռի կառուցմանն իրենց նպաստն են բերել նաև Սահակ կաթողիկոսը և Ադանայի առաջնորդ Եղիշե եպիսկոպոս Կարոյանը²²:

Սակայն նախկինում կառուցված եկեղեցիների կողքին ավելանում են նաև նորերը: Այսպես՝ 1938 թ. Հարություն Պոհճալյանի միջոցներով Նիկոսիայի հայկական նոր գերեզմանատանը կառուցվում է մատուռ և տեղադրվում խաչքար²³: 1940 թ. Լինաստլում բարերար Սաթենիկ Սուլթանյանի նվիրատվությամբ և մի քանի այլ անձանց հանգանակությունների շնորհիվ կառուցվում է Սուրբ Գևորգ եկեղեցին²⁴: Կիպրոսում հետագա տասնամյակներում կառուցվում են այլ նոր եկեղեցիներ ևս:

Ահա այս մի քանի եկեղեցիների ու մատուռների միջոցով էր Կիպրոսի թեմը հոգում կղզու հայ առաքելական համայնքի կարիքները:

Քննարկվող ժամանակաշրջանում թեմում ծառայող հոգևորականների թիվը մեծ չէր²⁵: 1924 թ. դրությամբ թեմում իրենց ծառայությունն էին իրականացնում 6 հոգևորականներ, որոնցից երկու եպիսկոպոսներ՝ Պետրոս արքեպ. Սարաճյանը, Եղիշե եպիսկոպոս Կարոյանը, և 4 քահանաներ²⁶: Նույն պատկերն էր նաև 1931 թ. դրությամբ²⁷: Իսկ արդեն 1940 թ. կղզում ծառայություն էին իրականացնում ընդամենը 2 քահանաներ²⁸:

Կիպրոսի թեմն ամեն ջանք գործադրում էր գաղթականներին եկեղեցու շուրջ համախմբելու համար: Թեմի հոգևորականները, բացի եկեղեցական տոների ու ծեսերի կատարումից, հաճախ էին տարբեր քարոզներով հանդես գալիս հավատացյալների առջև՝ հատկապես անդրադառնալով

19 Տե՛ս նույն տեղում, էջ 302:

20 «Արաքս» թերթի վկայությամբ՝ Լառնակայում, բացի այս մատուռից, գտնվել են նաև երկու այլ հայկական վանքեր: Այս մասին տե՛ս «Արաքս», Լառնակա, 16 հուլիսի, 1924, N 5, էջ 5:

21 Տե՛ս «Ատանայի վկաները եւ Սուրբ Ստեփանոս վկայարանը. 1909, Լառնագա», խմբ.՝ **Կարոժան արքեպիսկոպոս**, Նիկոսիա, 2010, էջ 116-160:

22 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 387: Տե՛ս նաև «Արաքս», Լառնակա, 1 օգոստոսի, 1924, N 6: Տե՛ս նաև **Զեպեյան Ղ.**, նշվ. աշխ., էջ 57-58:

23 Տե՛ս **Զեպեյան Ղ.**, նշվ. աշխ., էջ 53-54:

24 Տե՛ս **Զեպեյան Ղ.**, նշվ. աշխ., էջ 29: «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., 2003, էջ 344:

25 Տե՛ս **Զեպեյան Ղ.**, նշվ. աշխ., էջ 65-67:

26 Տե՛ս **Եղիայեան Բ.**, ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975, էջ 282:

27 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 459:

28 Տե՛ս «Հասկ», 1941, մարտ-ապրիլ, N 3-4, էջ 56; մայիս-հունիս, N 5-6, էջ 80:

համայնքում հայապահպանության խնդիրներին²⁹: Ինչպես Սփյուռքի մյուս համայնքներում, Կիպրոսում ևս հայոց եկեղեցին հետամուտ էր համայնքում բարոյական նորմերի պահպանմանն ու ավանդական արժեքների ամրապնդմանը: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում ամուսնաբանական հարցերին: Արվում էր հնարավորը հայերի շրջանում ամուսնալուծությունների և խառնամուսնությունների դեպքերը կանխելու ուղղությամբ: Հետագա ամուսնալուծություններից խուսափելու համար Սահակ Բ-ն Պետրոս սրբազանին արգելում է կատարել պսակադրություններ առանց բժշկական վկայականի, որը «մեծագոյն սխալ մի է եւ դժբաղդութեան պատճառ»³⁰: Պետրոս Սարաճյանը, տեղեկանալով, որ մի քանի հայ երիտասարդներ ամուսնացել են հույն աղջիկների հետ, քարոզի ժամանակ հանդիմանում է նրանց արարքը, խոսելով խառնամուսնությունների վնասների մասին՝ սպառնում է հետագայում նման դեպքերում զրկել եկեղեցու հաղորդությունից³¹: «Բացարձակապես կ'արգելենք խառն ամուսնութիւնը, որ ընտանեկան կեանքի փտախտն է»³², - գրում է Սահակ կաթողիկոսը Պետրոս սրբազանին կիպրահայ համայնքում խառնամուսնությանը հաջորդած ամուսնալուծության մի դեպքի առթիվ: «Այն, խառն ամուսնութիւն, ընտանիք քանդող եւ ապագայնացնող ազդակ»³³. ահա սա էր ուժացման տանող այդ երևույթի նկատմամբ Սահակ կաթողիկոսի գնահատականը:

Համայնքում տեղ գտած որոշ խաթարումների պատճառը համարվում էր «տարագրութեան անբնական վիճակը»³⁴: Ստեղծված իրավիճակի հաղթահարումը Կիպրոսի թեմը տեսնում էր ազգային կրթության միջոցով. «Թերեւս վարժարանները կարենան լաւ սերունդ մը հասցնելով մոռցնել տալ տարագրութեան յոռի նմոյշները»³⁵, -ասված էր Կիպրոսի թեմի՝ Անթիլիաս ներկայացրած տեղեկագրերից մեկում:

Հայության տարբեր շերտերին եկեղեցուն ավելի մոտ բերելուն էր ուղղված կղզում հաստատված թրքախոս գաղթականների համար կիրակնօրյա քարոզները վերջիններին համար հասկանալի թուրքերենով կատարելը: Այդ առթիվ Պետրոս սրբազանը գրում է. «...թրքերէն քարոզի սովորութիւն մը հաստատած ենք թրքախոսներու համար...., շատ օգտակար կըլլայ, մանաւանդ այդու արգելք կըլլայ, որ թրքախոսները բողոքականաց ժողովարանը չյաճախեն»³⁶: Այս ամենն արվում էր, ինչպես երևում է մեջբերումից, նաև բողոքականների ակտիվ գործունեությանը դիմակայելու նպատակով:

29 Տե՛ս «Արաքս», Լառնակա, 1 հուլիսի, 1924, N 4, էջ 3:

30 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի»,, էջ 235:

31 Տե՛ս նոյն տեղում, էջ 317:

32 Նոյն տեղում, էջ 349:

33 Նոյն տեղում, էջ 319:

34 Նոյն տեղում, էջ 445:

35 Նոյն տեղում, էջ 445:

36 Նոյն տեղում, էջ 127:

Ինչպես ամենուր, Կիպրոսում ևս սուր մրցակցություն կար հայոց եկեղեցու և մյուս հայ հարանվանությունների միջև. «Հայ յարանուանութիւններու կաթոլիկ եւ մանաւանդ բողոքականներու կողմէ միշտ ջանք կը թափուի հայ եկեղեցւոյ զաւակները խարբալել եւ որսալ ու երբեմն կը յաջողին նիւթական նպաստներով եւ շլացուցիչ պաշտօններով. միշտ աղքատն է, որ այդ մարդորսներու ձեռքը կ'իյնայ եւ հայ եկեղեցիէն կուծանայ»³⁷, – ասված է Կիպրոսի թաղական խորհրդի 1931 թ. տեղեկագրում:

Հետաքրքիր մի դրվագ է պատմում Պետրոս սրբազանը Կիպրոսի անգլիացի կառավարիչ Սթորսի հետ ունեցած հանդիպումից: Երբ մի առիթով զրուցել են հայության առջև ծառայած խնդիրներից, կրոնական հարանվանություններից, անգլիացի կուսակալը թեմի առաջնորդի համար անսպասելի հորդորում է «...հայ եկեղեցիէն հեռացող հայ բողոքականներու եւ հայ կաթոլիկներու հասկցնել, որ հայը առանց լուսաւորչական եկեղեցւոյ չը կրնար իր գոյութիւնը պահել»³⁸: Խիստ հետաքրքրական են օտարագրի պաշտոնյայի այս մտահոգությունն ու արած դիտարկումը: Պետրոս սրբազանը Սահակ վեհափառին գրած նամակներից մեկում հիշատակում է, որ իր հեղինակությամբ հրատարակվել է մի, այսպես կոչված, տետրակ, որտեղ ինքը արտացոլել է իր մտքերը «կրօնական զանազան յարանուանութեան ձգտած նպատակներու եւ գործունեութեանց վրայ»³⁹: Ցավոք, մեզ չհաջողվեց գտնել այդ գրքույկը:

Կաթոլիկ և հատկապես բողոքական հարանվանությունների հետ մրցակցությունը սուր էր դրսևորվում մասնավորապես Կիպրոս տեղափոխված կիլիկեցի որբերի կրթության և դաստիարակության հարցերում:

1924 թ. Կիպրոսի թեմում եկեղեցական տոները սկսում են տոնել նոր տոմարի համաձայն, ինչպես որ անում էր Կիպրոսի հույն ուղղափառ արքեպիսկոպոսությունը: Թեև Սիրիայում և Լիբանանում Կիլիկիո կաթողիկոսությունը շարունակում է առաջնորդվել հին տոմարով⁴⁰, սակայն Սահակ Բ-ն թույլատրում է Պետրոս սրբազանին արարողություններն իրականացնել նոր տոմարով՝ հորդորելով այդ հարցում օգտագործել «Էջմիածնայ հետևողութեամբ պատրաստուած օրացոյցը, որպէսզի նոր զարտուղութիւն մի ալ ատկէ առաջ չգայ»⁴¹:

Կիպրոսի թեմը և կիպրահայությունը մշտապես եղել են Կիլիկիո կաթողիկոսության բարձրագույն հոգևոր իշխանությունների ուշադրության կենտրոնում: Վերջիններս պարբերաբար այցելում էին Կիպրոս՝ մասնակ-

37 Նույն տեղում, էջ 455:

38 Նույն տեղում, էջ 190:

39 Նույն տեղում, էջ 227:

40 1925 թ. սկսած՝ Սիրիայում և Լիբանանում և Կիլիկիո կաթողիկոսությունը անցնում է նոր տոմարի:

41 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 117, 121:

ցելու տարբեր միջոցառումների՝ նպատակ ունենալով նաև տեղում ծանոթանալ իրավիճակին և առկա խնդիրներին:

Պարբերաբար անձան ամիսները Սուրբ Մակարի վանքում անցկացնելու և տեղում կիպրահայության խնդիրներին ծանոթանալու համար Կիպրոս էր այցելում Սահակ Բ-ն: Կաթողիկոսի առաջին այցը Կիպրոս տեղի է ունենում 1922 թ. օգոստոսին⁴², այնուհետև այդ այցերը կրկնվում են 1931, 1933 և 1934 թվականներին⁴³: 1931 թ. օգոստոսին Սահակ Բ-ի՝ Կիպրոս այցելության առթիվ Սարաճյան սրբազանը Սուրբ Մակարում ձաշկերույթ է կազմակերպում՝ հրավիրելով համայնքի երևելիներին և գործող ազգային հաստատությունների ներկայացուցիչներին⁴⁴: 1934 թ. ազգային բարերար Կարապետ Մելքոնյանի հուղարկավորությունը և թաղման կարգը⁴⁵ կատարվում են Կիլիկիո Սահակ հայրապետի և իր աթոռակից կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանի կողմից⁴⁶: Աղա Կարապետ Մելքոնյանը կարևոր ներդրում էր ունեցել ծանր նյութական վիճակում գտնվող Կիլիկիո կաթողիկոսությանը աջակցելու հարցում: 1930 թ. ապրիլին Բաբկեն Կյուլեսերյանի դիմումի հիման վրա մեծ բարերարը համաձայնել էր իր տարեկան 5000 ոսկի կենսաթոշակից 1000-ը՝ «մշտնջենապէս ամէն տարի տրուելու պայմանաւ, սկսեալ 1930 ապրիլ 29-էն»⁴⁷ հատկացնել կաթողիկոսությանը: Սա անչափ կարևոր էր ֆինանսական ծանր վիճակում գտնվող կաթողիկոսությանը կայուն միջոցներով ապահովելու առումով: Կարապետ Մելքոնյանի տրամադրած այս 1000 անգլիական ոսկին երկար ժամանակ Կիլիկիո Աթոռի միակ հաստատուն եկամուտն էր:

1934 թ. առաջին անգամ Կիպրոս է այցելում նաև Կիլիկիո աթոռակից կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանը: Մինչ աթոռակից կաթողիկոս դառնալը նա միշտ ցանկություն էր ունեցել այցելելու Կիպրոս, սակայն զբաղվածության և մի շարք այլ հանգամանքների պատճառով այդ այցը իրագործելի եղավ միայն 1934 թ.: Նախ այդ թվականի ամռանը, ինչպես վերը նշվեց, Բաբկեն աթոռակից կաթողիկոսը մասնակցում է բարերար Կարապետ Մելքոնյանի հուղարկավորությանը, իսկ մինչ դա՝ 1934 թ. գարնանը, կատարում է իր առաջին թեմական այցելությունը Կիպրոս⁴⁸: 1934 թ. մար-

42 Տես նույն տեղում, էջ 72:

43 Տես «Արև», Գահիրե, 29 հունիսի, N 4395, 1933, էջ 1: Տես նաև «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի»,, էջ 364, 372:

44 Տես «Արև», 13 օգոստոսի, N 3816, 1931, էջ 2:

45 Կարապետ Մելքոնյանը մահացել էր 1934 թ. հուլիսի 23-ին Ալեքսանդրիայում: Սակայն վերջինիս դիակը տեղափոխվում և օգոստոսի 19-ին ամփոփվում է բարերարի միջոցներով կառուցված Մելքոնյան հաստատության մոտ գտնվող դամբարանում: Այդտեղ է տեղափոխվում նաև Ալեքսանդրիայում 1920 թ. մահացած բարերարի մյուս եղբայրը Գրիգոր Մելքոնյանը: Այս մասին տես **Կիլիկիոյան Բաբկեն**, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1990, էջ 1053-1055: Տես նաև «Հասկ», 1934, սեպտեմբեր, N 9: Տես նաև Մելգոնեան կրթական հաստատութիւն (համառօտ ակնարկ), Նիկոսիա-Կիպրոս, 1957 էջ 6-7:

46 Տես **Կիլիկիոյան Բաբկեն**, Պատմութիւն....., էջ 1054-1055:

47 «Թղթակցութիւն Սահակ Ա. եւ Բաբկէն Բ. Կաթողիկոսներու»,, էջ 266, 282, 292:

48 Տես «Արև», 1934, 15 մարտի, N 4614, էջ 1:

տի 24-ին Կիպրոսի թեմի առաջնորդ Պետրոս սրբազանի ուղեկցությամբ ճանապարհվում է Կիպրոս, որտեղ մնում է մինչև մայիսի 10-ը⁴⁹: Այցը ճանաչողական էր, որի նպատակն էր ծանոթանալ տեղի եկեղեցական և ազգային կառույցների գործունեությանը, համայնքի ներքին կյանքին, ինչպես նաև Կիպրոսի հայությանը տեղեկացնել Կիլիկիո աթոռի գործունեության մասին:

Բաբկեն կաթողիկոսը այցելում է կղզու բոլոր հայաշատ քաղաքները, որտեղ հանդիպում է հայության ներկայացուցիչների հետ, կարդում քարոզներ, մատուցում պատարագներ⁵⁰: Սուրբ Մակարում մատուցած պատարագին ներկա է լինում ավելի քան հազար մարդ, այսինքն՝ կղզու հայ բնակչության մոտ մեկ երրորդը⁵¹: Տեղի համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Բաբկեն կաթողիկոսը, խոսելով հայապահպանության խնդիրների մասին, ընդգծում է, որ «...հայ ժողովուրդին իբրև հայ քրիստոնեայ պահպանության համար պէտք է ամրացնել հայ տունը, հայ դպրոցը, հայ եկեղեցին»⁵²:

Ի պատիվ աթոռակից կաթողիկոսի այցի՝ Բարեգործականի տեղի մասնաձյուղը կազմակերպում է մի շարք ժողովներ և «պատույ սեղաններ»⁵³: Բաբկեն կաթողիկոսը այցելում է նաև Մելքոնյան վարժարան՝ արժանանալով ջերմ ընդունելության: Այդ հանդիպումների ժամանակ աթոռակից կաթողիկոսը կարևորում է Բարեգործականի դերն ու նշանակությունը Սփյուռքի հայկական դպրոցների պահպանման հարցում, ինչպես նաև շեշտում է այդ կառույցի համահայկական դերը, որը՝ «...իբրև կազմակերպություն, հիանալի պատեհություն մը կ'ընծայէ հայ ժողովուրդի բոլոր յարանուանական և կուսակցական հատուածներուն, համագործակցելու նպատակի մը շուրջ: Բարեգործականի մէջ չկայ եկեղեցիներու տարբերութեան խնդիր, չկայ սեռի և հասակի խտրութիւն, չկայ դասակարգի զանազանութիւն, այլ **հայ** կայ միայն»⁵⁴ (ընդգծումը մերն է – Է. Հ.):

Բաբկեն վեհափառը, ի հիշատակ Ցեղասպանության նահատակների, ապրիլի 22-ին պատարագ է մատուցում Նիկոսիայի Սուրբ Աստվածածին հայկական եկեղեցում⁵⁵: Կաթողիկոսը հանդիպումներ է ունենում նաև

49 Տե՛ս «Հասկ», 1934, ապրիլ, N 4, մայիս, N 5:

50 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի»,, էջ 368-369:

51 Տե՛ս «Արև», 1934, 29 մայիսի, N 4676, էջ 2-3:

52 «Հասկ», 1934, մայիս, N 5, էջ 42:

53 Տե՛ս նույն տեղում:

54 Նույն տեղում:

55 Հետագայում Բաբկեն աթոռակից կաթողիկոսը Սուսա լեռան շրջանի գյուղեր իր այցելության ընթացքում նկատում է, որ Բիթիասի, Հաջի Հաբիբլիի, Յողուն Օլուզի, Խդրբեզի և Անտիոքի եկեղեցիների մէջ «Տիրամօր պատկերները օտար արուեստով շինուած ջրանկարներ են» և կարգադրում է, որ դրանք հեռացնեն, փոխարենը «հայ արուեստով իւղաներկեր դնել անոնց տեղ»: Այդ նպատակով շուտով Կիպրոսում Նիկոսիայի հայկական Սուրբ Աստվածածին եկեղեցու ավագ խորանի Տիրամօր պատկերի ոճով հինգ յուղաներկ պատկերներ են պատվիրում գեղարվեստի ուսուցիչ Առաքել Պատրիկին, և այդ նկարները փոխանցվում են Անտիոքի առաջնորդ Խաղ սրբազանին՝ նշված գյուղերի եկեղեցիներում տեղադրելու համար: Այս առաջին հայացքից ոչ շատ էական քայլով Կիլիկիո աթոռը փորձում էր պահպանել հայկական եկեղեցական ավանդույթները: Տե՛ս «Հասկ», հունվար-փետրվար, 1936, N 1-2:

Կիպրոսի անգլիացի կառավարչի և Կիպրոսի հունական արքեպիսկոպոսության տեղապահի հետ⁵⁶:

Աթոռակից կաթողիկոսը այցելում է նաև Նիկոսիայի հունական պատրիարքարան և Մաքերայի հունական վանք՝ դրանով կարևոր քայլ կատարելով հայ-հունական հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ⁵⁷: Կահիրեի «Արև»-ը, անդրադառնալով Բաբկեն կաթողիկոսի՝ Կիպրոս կատարած այցին, գրում է, որ վերջինս «...ամբողջ մէկ ու կէս ամիս կրցաւ տենդագին շարժման մը մէջ դնել ու խանդավառել իր ներշնչող խօսքին հմայքով ամբողջ կիպրահայ գաղութը»⁵⁸, հույս հայտնելով, որ այդ խանդավառությունը կպահպանվի նաև կաթողիկոսի մեկնելուց հետո:

Բաբկեն Ա աթոռակից կաթողիկոսը, տպավորվելով Կիպրոս կղզով և այնտեղ գտնվող հայկական հուշարձաններով, որոշում է «Սբ Մակարի վրայ գրել տետրակ մը», սակայն գիտնական հոգևորականի պրպտումները և հավաքած նյութը հեղինակին հնարավորություն են տալիս անդրադառնալու ողջ կիպրահայ գաղութին և իր հերթական պատմագիտական հետազոտությունը նվիրելու հենց այս թեմային: Կիպրոս կատարած իր այցից երկու տարի անց Անթիլիասի տպարանում լույս է տեսնում Բաբկեն Ա-ի «Հայ Կիպրոս. Հայ գաղութը եւ Սբ Մակար» աշխատությունը, որը, լինելով կարևոր երկ՝ նվիրված կիպրահայ գաղութի պատմությանը, հենց իր՝ հեղինակի բնորոշմամբ նյութերի սակավության պատճառով «լման գործ մը չէ»⁵⁹: Հեղինակը նախևառաջ հնարավորություն չէր ունեցել ամբողջական ձևով օգտվելու «Կիպրոսի մէջ գրուած, Կիպրոսի համար եւ կամ Կիպրոսի վերաբերմամբ գրուած» բոլոր հնարավոր աղբյուրներից: Աշխատանքը, այնուամենայնիվ, հանդիսանում է հիրավի կարևոր աղբյուր Կիպրոսի հայության պատմության հետազոտման համար: Ի դեպ, գրքի վաճառքից առաջացած ողջ հասույթը նախատեսվում էր հանձնել Սուրբ Մակարի «բարեգարդութեանը»:

Կիպրոսի հայոց թեմն ակտիվ մասնակցություն էր ունենում նաև Կիլիկիո կաթողիկոսության տարբեր նախաձեռնություններին՝ փորձելով իր նպաստը բերել կաթողիկոսության վերակազմության և ամրապնդման գործին:

1931 թ. ապրիլին Սահակ Բ-ն Հալեպում նախատեսում է անցկացնել կաթողիկոսության թեմակալ եպիսկոպոսների և աշխարհիկ ներկայացուցիչների մասնակցությամբ ժողով՝ «...քայլ մըն ալ յառաջ տանելու նպատակաւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան կազմակերպութիւնը»⁶⁰: Ժողովին

56 Տե՛ս «Հասկ», մայիս, 1934, N 5, էջ 16:

57 Տե՛ս «Արև», 1934, 29 մայիսի, N 4676, էջ 2-3:

58 «Արև», 1934, 29 մայիսի, N 4676, էջ 3:

59 Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կայ Կիպրոս,, Ներածական, էջ 7:

60 Նույն տեղում, էջ 1006:

Կիպրոսից, բացի թեմի առաջնորդից, մասնակցում են ևս երկու աշխարհիկ պատգամավորներ⁶¹: Ժողովի օրակարգը ձևավորելու և թեմերում իրավիճակին ծանոթանալու համար կաթողիկոսը թեմեր էր ուղարկել կոնդակշրջաբերական և 26 հարցից բաղկացած հարցարան⁶²: Այդ փաստաթղթերն առաքվեցին նաև Կիպրոսի թեմ: Կիպրոսի ազգային իշխանությունների կողմից 1931 թ. փետրվարին լրացված հարցարանը խիստ կարևոր վիճակագրական տեղեկույթ է Կիպրոսի հայության քննարկվող ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ⁶³:

Այդ տեղեկագրում Կիպրոսի թաղական խորհրդի կողմից կատարվում էին հետաքրքիր առաջարկներ հայոց եկեղեցու բարեփոխումների վերաբերյալ, որոնք անշուշտ բխում էին ստեղծված վիճակից: Այսպես, քանի որ «ժողովուրդը եկեղեցույ լեզուն չի հասկնար», առաջարկվում էին եկեղեցական արարողությունները կատարել աշխարհաբարով և «պատշաճ ընտրութեամբ», հնարավորինս կրճատել ժամերգությունների քանակն ու 4-5 ժամ տևող պատարագի ժամերը: Առաջարկում էին նաև քայլեր անել, որ հոգևորականներն ավելի մոտ գտնվեն իրենց հոտին, «...պարտադրել քահանաները, որ յաճախակի այցելեն իրենց ծուխերուն եւ հոգևոր ու բարոյական խրատներով անոնց պարտականութիւնները սորվեցնեն ու յիշեցնեն»⁶⁴, - ասված էր տեղեկագրում:

Միաժամանակ առաջարկվում էր վերանայել կուսակրոնության հարցը, որը հնարավորություն կտար շատ արժանավոր և խելացի անձանց անցնելու հոգևոր ծառայության: Հետաքրքրական էր եկեղեցականների թոշակ կամ աշխատավարձ տրամադրելու մասին առաջարկությունը, որի ընդունման դեպքում, ըստ առաջարկի հեղինակների, հոգևորականները կազատվեն «ապրուստի ամենօրեայ մղձաւանջէ», միաժամանակ հնարավորություն կստանան մնալու իրենց բարձրության վրա, քանզի վարձատրման ներկա ձևը, ըստ սույն փաստաթղթի, «եկեղեցականը կը ստորացնէ, կեղծաւորելու կը վարժեցնէ, մուրացկանի աստիճանին կ'իջեցնէ»⁶⁵:

Փաստորեն, շատ խելամիտ ձևով առաջարկվում էր, որ եկեղեցական արարողությունների՝ պսակ, թաղում, մկրտություն և այլնի համար նախատեսված վճարները գանձի եկեղեցու հոգաբարձությունը, իսկ հոգևորականներին տրվի համապատասխան աշխատավարձ: «Եկեղեցականը ժողովուրդէն ռելէ անուան տակ դրամ առնելու իրաւունք պէտք չէ ունենայ»⁶⁶, - ամբողջացնում էր իր տեսակետը Կիպրոսի թաղական խորհուրդը:

61 Կիպրոսի թեմի կողմից որպես աշխարհիկ պատգամավորներ ընտրվում են Արամ Չևրոյանը և Հարություն Պետոյանը: Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի»,, էջ 305, 309:

62 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի»,, էջ 302-306, 438-440:

63 Տե՛ս նույն տեղում, էջ 441-459:

64 Նույն տեղում, էջ 453:

65 Նույն տեղում, էջ 455:

66 Նույն տեղում:

Հասկանալի է, որ այս առաջարկները կատարվել էին ոչ միայն թեմի առաջնորդի գիտությամբ, այլ նաև հենց իր մասնակցությամբ:

Այս առաջարկները բխում էին առօրյա կյանքի իրողություններից, սակայն դրանց հիմնական մասը չընդունվեց և կյանքի չկոչվեց հայոց եկեղեցու կողմից: Կիպրոսի հայոց թեմի նման առաջարկները ցույց էին տալիս, որ նրա պատասխանատուներն ունեին որոշ մտահոգություններ հայոց եկեղեցին ժողովրդին ավելի մոտ բերելու, նոր կազմավորվող համայնքներում կուտակված խնդիրները համատեղ ջանքերով արդյունավետ լուծելու առնչությամբ:

Այսպիսով՝ Կիլիկիո կաթողիկոսությունը, ի դեմս Կիպրոսի հայոց թեմի, գործադրում էր հնարավոր բոլոր ջանքերը՝ Կիպրոսի հայկական համայնքը եկեղեցու շուրջ համախմբելու, համայնքի հոգևոր պահանջմունքները բավարարելու համար, որի գլխավոր նպատակը ուծացման գործընթացների հնարավոր կանխումն էր՝ հայապահպանությունը:

2. Կիպրոսի հայոց թեմի ջանքերը ազգային կրթության կազմակերպման ուղղությամբ

Հայապահպանության տեսանկյունից հաջորդ կարևոր ուղղությունը ազգային-կրթական կյանքի կազմակերպումն էր: Մինչ Կիպրոսի թեմի՝ Կիլիկիո կաթողիկոսության ենթակայությանն անցնելը կղզում գործել են մի քանի կրթական հաստատություններ: Նիկոսիայի Սուրբ Աստվածածին հայոց եկեղեցուն կից գործող՝ տղաների Վարդանանց վարժարանի մասին հիշատակվում է դեռևս 19-րդ դարի 60-ական թթ. սկսած⁶⁷: Նույն եկեղեցում գործում էր նաև աղջիկների Շուշանյան վարժարանը⁶⁸: Այս ուսումնական հաստատությունների կայացման ու զարգացման համար կարևոր ներդրում է ունեցել այն ժամանակ դեռևս վարդապետ Պետրոս Սարաճյանը, որը 1899-1905 թթ. ղեկավարել էր Կիպրոսի հայոց թեմը⁶⁹:

Նշված ուսումնական հաստատություններից բացի՝ 1897 թ. Նիկոսիայում հիմնվել և շուրջ յոթ տարի գործել են ազգային կրթարան-որբանոցը և մի քանի այլ ոչ մեծ կրթօջախներ, որոնք երկար կյանք չեն ունեցել: Այդ ուսումնական հաստատությունները հիմնականում պահվել են բարերարների նվիրատվությունների շնորհիվ: Նիկոսիայի ազգային կրթարան-որբանոցը պահվում էր Մանչեստրի՝ հիմնականում հայ վաճառականներից կազմված խնամակալության հայթայթած միջոցներով տնօրեն-խորհրդի հսկո-

67 Տե՛ս Ավայաճեան Ա., նշվ. աշխ., էջ 235: Տե՛ս նաև Զեպեյան Ղ., նշվ. աշխ., էջ 79:

68 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 94, 397: Տե՛ս նաև Ավայաճեան Ա., նշվ. աշխ., էջ 228: Տե՛ս նաև Կիլիկիոյի Բարձէն, Հայ Կիպրոս, ..., էջ 112:

69 Տե՛ս Բակուրյան, նշվ. աշխ., էջ 85-86:

ղության ներքո, որը նախագահում էր թեմի առաջնորդ Պետրոս վարդապետ Սարաձյանը⁷⁰:

«Նիկոսիոյ մէջ ունինք երկսեռ վարժարաններ եւ մանկապարտեզ մը, Սբ Մակարայ վանքին եւ Լառնակայի մէջ մէյ մէկ վարժարան, որոնց մէջ կ'ուսանին 100-120 ուսանողներ եւ ունին 6 կրթական պաշտօնեաներ»⁷¹, - ասված է Կիպրոսի թաղական խորհրդի 1913 թ. մի տեղեկագրում: Հիշատակությունների համաձայն 1920-ական թթ. սկզբներին փոքրիկ դպրոց է գործել նաև Սուրբ Մակարի վանքում՝ 10-12 աշակերտներով և մեկ ուսուցչով⁷²:

Կիպրոսի հայության կրթական կյանքն ամբողջությամբ փոխվում է 1920-ական թթ. սկսած. առաջ են գալիս նոր խնդիրներ ազգային-կրթական կյանքի կազմակերպման հարցում: Խնդրի լուծումը հիմնականում իրենց վրա են վերցնում Կիպրոսի հայոց թեմը և տեղի ազգային իշխանության մարմինները: Պետրոս Սարաձյանը իր գործունեության ընթացքում մշտապես կարևորել է կրթական գործի կազմակերպումը. մինչև Կիպրոսի թեմի առաջնորդ նշանակվելը կրթական հաստատություններ հիմնելու և բարեկարգելու հարուստ փորձ ուներ: Բացի դրանից՝ իր հիմնական գործունեությանը զուգահեռ զբաղվել է ուսուցչությամբ: «Ուր եղած է... անձնուիրաբար ուսուցչութիւն ըրած»⁷³, - գրում է Պետրոս սրբազանի մասին Կիլիկիոյ աթոռակից կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանը:

Կիպրոսում հայության թվաքանակի աճին զուգընթաց կարիք առաջացավ ավելացնելու կրթական հաստատությունների թիվը, դրանք համարելու անհրաժեշտ մասնագետներով, ինչպես նաև ապահովելու գործունեության համար անհրաժեշտ նյութական միջոցներով: 1920-ական թթ. սկզբներից Կիպրոսի թաղական խորհրդին կից գործում էր վարժարանների հոգաբարձությունը, որին էլ հիմնականում վերապահված էր կազմակերպել և վերահսկել կղզու հայկական կրթական հաստատությունների գործունեությունը⁷⁴:

Ներդրված ջանքերի շնորհիվ քննարկվող ժամանակաշրջանում ավելացավ կղզու հայկական ուսումնական հաստատությունների թիվը, և կրթական կյանքը դարձավ ավելի կազմակերպված: «Սարաձեան սրբազան եւ Թաղական խորհուրդը կարելի կ'ընեն, որպէսզի տեղացի եւ գաղթական երկսեռ աշակերտութիւնը չի զրկուի ուսումէն»⁷⁵, - գրում էր «Արևը» 1922 թ.: 1923 թ. տվյալներով Կիպրոսում հաստատված գաղթականներ

70 Տե՛ս **Բակուրան**, մշվ. աշխ., էջ 86: «Ազգային կրթարան-որբանոց ի Կիպրոս», Տեղեկագիր Ե տարեշրջանի, Նիկոսիա, 1902, էջ 21-36: Տե՛ս նաև **Ալպոյաձեան Ա.**, մշվ. աշխ., էջ 237: Տե՛ս նաև **Կիլիկիոյան Բաբկեն**, Հայ Կիպրոս,, էջ 93-102:

71 «Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի»,, էջ 388:

72 Տե՛ս նույն տեղում, էջ 31:

73 **Կիլիկիոյան Բաբկեն**, Հայ Կիպրոս,, էջ 251:

74 Տե՛ս նույն տեղում, էջ 441-442:

75 «Արև», Ալեքսանդրիա, 1922, 27 նոյեմբերի, N 1154, էջ 1:

րից շուրջ 700-ը դպրոցական տարիքի երկսեռ երեխաներ էին, որոնց կրթության հարցերը կազմակերպելու և անհրաժեշտ միջոցներով ապահովելու համար Պետրոս Սարաձյանը օգնության ակնկալիքով դիմում է Հայկական բարեգործական ընդհանուր միությանը և տարբեր այլ կառույցներին: Խնդրահարույց էր նաև ուսուցիչներին համապատասխան աշխատավարձով ապահովելու հարցը⁷⁶:

Ստեղծված վիճակից ելնելու և առկա խնդիրներն արդյունավետ լուծելու համար անհրաժեշտ էր ցուցաբերել համակարգված մոտեցում: Շուտով Պետրոս Սարաձյանի ջանքերով և բարերար Հարություն Մելիքյանի նվիրատվությամբ 1921 թ. Նիկոսիայում կառուցվում և իր գործունեությունն է սկսում նվիրատուի անունը կրող Մելիքյան ազգային երկսեռ վարժարանը, որը նախակրթարան էր⁷⁷: Վարժարանը գլխավորապես պահվում էր Սուրբ Մակարի՝ վարձակալության տրված սենյակներից, հողերից ու կավածքներից ստացված հասույթների հաշվին⁷⁸: Այդ հասույթները հանդիսանում էին Կիպրոսի թեմի հիմնական եկամտի աղբյուրը, որով հոգում էին բազմաթիվ այլ ծախսեր⁷⁹: 1923 թ. տվյալներով Նիկոսիայի ազգային վարժարանում և դրան կից մանկապարտեզում ուսանում էին 320⁸⁰, 1920-ական թթ. կեսերին՝ ավելի քան 400 երկսեռ աշակերտներ՝ 11 ուսուցիչներով⁸¹: Վարժարանին կից գործող մանկապարտեզը 1930-ական թթ. իր ավելի քան 200 սաներով տեղակայվեց Մելիքյան ազգային վարժարանի շենքում⁸²:

1938 թ. կիպրաբնակ մեկ այլ բարերարի՝ Տիգրան Ուզունյանի կողմից Նիկոսիայի Վարդանանց վարժարանի տեղում կառուցվում է Ուզունյան վարժարանը⁸³: Շուտով վերը նշված Մելիքյան վարժարանը միավորվում է նորաբաց Ուզունյան վարժարանին և Մելիքյան-Ուզունյան վարժարան անվանումով շարունակում իր գործունեությունը մինչև 1963 թ.⁸⁴:

Կիպրոսի երկրորդ խոշոր քաղաք Լառնակայում հայկական առաջին դպրոցը հիմնվել էր դեռևս 1909 թ. Ադանայից գաղթած հայերի կողմից⁸⁵: 1920-ական թթ. սկզբներին կարիք է առաջանում վարժարանի նոր և ավելի ընդարձակ շենքի կառուցման: Մինչ այդ Լառնակայի դպրոցահասակ երեխաների համար ուսուցման գործընթացը կազմակերպվում էր վարձա-

76 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն»,, էջ 189-191:
 77 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի»,, էջ 37, 94:
 78 Տե՛ս «Արև», 1926, 20 հոկտեմբերի, N 2333, էջ 2; 1938, 10 փետրվարի, N 5811, էջ 2-3:
 79 Տե՛ս «Արև», 1925, 31 օգոստոսի, N 1982, էջ 2:
 80 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն»,, էջ 194:
 81 Տե՛ս **Վլադյան Ա.**, նշվ. աշխ., էջ 236: Տե՛ս նաև «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի»,, էջ 216:
 82 Տե՛ս **Կիլիսեան Բարգիւն**, Հայ Կիպրոս,, էջ 113: Տե՛ս նաև «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի»,, էջ 31, 192:
 83 Տե՛ս **Սարաձեան Պ.**, Կեանքի մը պայքարը, Ամբիլիաս, տպարան Դպրեվանուց Կաթողիկոսութեան Կիլիկիոյ, 1937, էջ 145: Տե՛ս նաև «Հասկ», 1938, փետրվար, N 2, էջ 31-32: Տե՛ս նաև **Զեպեյան Ղ.**, նշվ. աշխ., էջ 83:
 84 Տե՛ս «Հայ սփյուռք հանրագիտարան»,, էջ 345:
 85 Տե՛ս Ատանայի վկաները եւ Սուրբ Ստեփանոս վկայարանը. 1909, Լառնագա,, էջ 142: Տե՛ս նաև **Զեպեյան Ղ.**, նշվ. աշխ., էջ 84-85:

կալության հիմունքներով կաթոլիկների տրամադրած շենքում: Սակայն, քանի որ Պետրոս սրբազանի խոսքով՝ «չկրցանք ոչ մի աղքատ ընդունել եւ ոչ ալ կրցանք աշակերտաց վրայ բարոյական հսկողութեան իրաւունք ունենալ»⁸⁶, որոշվում է հայոց եկեղեցու հովանու ներքո գործող վարժարանի նոր շենք կառուցել: «Ա՛խ այդ կաթոլիկները, որ ամէն տեղ մեր դժբաղդութիւնը օգտագործել կ'ուզեն»⁸⁷, - գրում էր Սահակ կաթողիկոսը Պետրոս սրբազանին այդ առթիվ:

Նոր վարժարանը, դատելով սրբազանի խոսքից, լուծելու էր ոչ միայն սոցիալական խնդիր, այսինքն՝ դառնալու էր հասանելի աղքատ գաղթականների երեխաների համար, այլ նաև հայապահպանության խնդիր՝ հայությանը հեռու պահելով այլ դավանանքների ազդեցություններից:

1923 թ. հոկտեմբերին ավարտվում է Լառնակայի ազգային վարժարանի շենքի կառուցումը կիպրահայության «ազգային սնտուկի» և 1913 թ. հիմնադրված Ամերիկայի «Ադանայի հայ ուսումնասիրաց միութեան» հատկացրած միջոցներով: Այս կազմակերպության մասնաճյուղը 1925 թ. հիմնադրվում է նաև Լառնակայում, որը շարունակում է իր աջակցությունը տրամադրել տեղի վարժարանին⁸⁸: 1926 թ. բարերար Կ. Մելքոնյանի միջոցներով էլ կառուցվում է վարժարանի նոր հարկաբաժինը⁸⁹: Այս ուսումնական հաստատությունը ևս նախակրթարան էր: 1920-ական թթ. կեսերին Լառնակայի ազգային վարժարանում ուսանում էին ավելի քան 200 երկսեռ աշակերտներ⁹⁰, դասավանդում՝ 6-7 ուսուցիչներ⁹¹:

Հետագա տարիներին Կիպրոսի հայկական ուսումնական հաստատությունների թիվն ավելանում է⁹²: 1928 թ. դպրոցներ են բացվում նաև Կիպրոսի մյուս հայաբնակ քաղաքներում՝ Ամիանտոսում, Լիմասոլում և Ֆամագուստայում⁹³: Այդ շրջանում Ամիանտոսի վարժարանում ուսանում էին 50, Լիմասոլում՝ 22, իսկ Ֆամագուստայում՝ 18 երկսեռ աշակերտներ: Աշակերտների թիվը հետագայում աճում է⁹⁴: Նոր դպրոցների բացման առթիվ Պետրոս սրբազանը Սահակ Բ-ին գրում է, որ հավելյալ ծախսեր են առաջացել, բայց «...խիղճս հանդարտ է, որովհետև հայ մանուկները այդ վայրերու մէջ, օտար վարժարաններէ ազատեցինք»⁹⁵:

86 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 88:

87 Նույն տեղում, էջ 89:

88 Տես **Չէպէան Ղ.**, նշվ. աշխ., էջ 84-85: Տես նաև «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն», ..., էջ 250, 259-264:

89 Տես **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 236: Տես նաև «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 94: **Չէպէան Ղ.**, նշվ. աշխ., էջ 85:

90 Այդ շրջանում Լառնակայում դպրոցահասակ երեխաների թիվը հասնում էր 400-ի, և կարիք կար ավելի մեծ դպրոցի: Տես «Արաքս», Լառնակա, 1924, 16 հուլիսի, N 5, էջ 5:

91 Տես **Ալպոյաճեան Ա.**, նշվ. աշխ., էջ 236: Տես նաև «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 216: Տես նաև «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն...», էջ 194:

92 Նիկոսիայի ազգային վարժարանը գործել է 19-րդ դարի կեսերից սկսած:

93 Տես «Արև», 1928, 4 հոկտեմբերի, N 2937, էջ 1:

94 Տես «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն», էջ 284, 293-294:

95 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 262:

Փաստորեն, արդեն 1920-ական թթ. վերջերին կղզու բոլոր խոշոր քաղաքներում՝ Նիկոսիա, Լառնակա, Լինասոլ, Ֆամագուստա, Ամիանտոս, գործում էին մեկական հայկական դպրոցներ, ինչպես նաև դրանց կից՝ հինգ մանկապարտեզներ⁹⁶:

1929 թ. դրությամբ Կիպրոսի հայկական վարժարանների աշակերտության թիվը հասնում էր 690-ի⁹⁷, 1931 թ.՝ 613-ի⁹⁸: Նշենք, որ այստեղ ներառված չէ Մելքոնյան վարժարանի սաների թիվը: Կիպրոսի հայկական դպրոցները հիմնականում համալրված էին բանիմաց ուսուցիչներով, որոնց ընդհանուր թիվը 1931 թ. դրությամբ 31 էր⁹⁹: Պետք է նշել, սակայն, որ երբեմն լինում էր որակյալ ուսուցիչների պակասի խնդիր: 1940 թ. Կիպրոսի թեմի՝ Անթիլիաս հայտնած վիճակագրական տվյալների համաձայն՝ կղզում շարունակում էին գործել 5 հայկական դպրոցներ՝ մոտ 500 աշակերտներով և 25 ուսուցիչներով¹⁰⁰: Աշակերտների թվի նվազումը հիմնականում պայմանավորված էր գաղթականների ներհոսքի դադարեցմամբ և ոմանց՝ կղզուց հեռանալով:

1920-1930-ական թթ. Կիպրոսի հայկական դպրոցներից ամենահայտնին շարունակում էր մնալ Նիկոսիայի Մելիքյան ազգային վարժարանը: Նշենք նաև, որ Կիպրոսում 1926 թ. գործում էր նաև հայտնի Մելքոնյան վարժարանը, որն անմիջապես գտնվում էր ՀԲԸՄ կառավարման ներքո և չէր ենթարկվում Կիպրոսի հայոց թեմին¹⁰¹: Դա սկզբում որբանոց-նախակրթարան էր, այնուհետև վերածվեց երկրորդական վարժարանի¹⁰²:

Կղզում գործող հայկական ուսումնական հաստատությունները պահվում էին հիմնականում Կիպրոսի հայոց թեմի միջոցներով: Որոշ աջակցություն էին ցուցաբերում նաև բարերարները, ինչպես նաև տեղական անգլիական իշխանությունները, որոնք տրամադրում էին ոչ մեծ չափի նպաստ¹⁰³: Օրինակ՝ Նիկոսիայի վարժարանի համար տարեկան ծախսվում էր 500, իսկ Լառնակայի վարժարանի համար՝ 240 ոսկի, որը Պետրոս սրբազանի հավաստմամբ շատ ծանր էր ոչ մեծ եկամուտներ ունեցող թեմի համար¹⁰⁴: 1929 թ. դրությամբ կղզու 690 աշակերտների ուսման կազմակերպման ընդհանուր ծախսը կազմում էր շուրջ 1275 անգլիական ոսկի, որի ընդամենը մի մասն էր գոյանում աշակերտների ուսման համար տարբեր բարեգործական կառույցների կողմից վճարվող թոշակներից: Որոշ

96 Տե՛ս նույն տեղում, էջ 143, 446-447, 456-459: Տե՛ս նաև Կիվլետրեան Բարզեհ, Հայ Կիպրոս..., էջ 113-114:

97 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն», էջ 284:

98 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի», ..., էջ 459:

99 Տե՛ս նույն տեղում, էջ 450, 459:

100 Տե՛ս «Հասկ», մայիս-հունիս, 1941, N 5-6, էջ 80:

101 Տե՛ս Ալայոյաձեան Ա., նշվ. աշխ., էջ 237-239:

102 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան կրթական հաստատութիւն», էջ 16:

103 Տե՛ս Կիվլետրեան Բարզեհ, Հայ Կիպրոս..., էջ 114: Տե՛ս նաև «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն...», էջ 284:

104 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի», ..., էջ 143:

դպրոցներ ունեին իրենց սեփական նորակառույց շենքերը, իսկ մյուսները գործում էին վարձակալած շենքերում:

Կիպրոսի հայկական դպրոցները փորձում էին տալ որակյալ կրթություն և մրցակցել կղզում գործող նմանատիպ այլ ուսումնական հաստատությունների հետ: «Մենք Կիպրոսի համար սրտի կատարեալ գոհունակութեամբ կը յայտարարենք թէ մեր Ազգային վարժարաններուն մանուկները լաւագոյն ձեռքերու յանձնուած են ու ցարդ դժգոհութիւն պատճառելիք բանի մը չենք հանդիպած եւ կը յուսանք հակառակը արձանագրելու առիթը չի պիտի ունենանք ապագային»¹⁰⁵, - գրում էր «Արաքս» թերթը կղզու ազգային ուսումնական հաստատությունների տված կրթության որակի մասին:

Կարևոր տեղ էր հատկացվում նաև մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության հարցերին: 1926 թ. Մելիքյան ազգային վարժարանին կից մարզանքի ուսուցիչ Պ. Եազմձյանի նախաձեռնությամբ սկսում է գործել Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) մասնաճյուղ, որին թեմի առաջնորդի ցուցումով անդամակցում են նաև դպրոցի աշակերտները¹⁰⁶: Կղզում գործում էին նաև հայկական մարզական խմբակներ և ֆուտբոլի թիմեր¹⁰⁷:

Կային նաև մի քանի մասնավոր դպրոցներ¹⁰⁸: «Արև» թերթը, անդրադառնալով Կիպրոսի մասնավոր դպրոցներին, գրում է, որ մի քանի հայ ունևորներ «անձնական վարժարաններ հաստատած են իրարմէ՛ անկապ և անջատ»¹⁰⁹:

Ցավոք պետք է նշենք նաև, որ ինչպես ամենուր, Կիպրոսում ևս որոշ ծնողներ նախընտրում էին իրենց երեխաների ուսումը կազմակերպել օտար դպրոցներում: 1930-ական թթ. սկզբներին 100-ից ավելի կիպրահայ երեխաներ հաճախում էին օտար՝ հիմնականում անգլիական և ամերիկյան ուսումնական հաստատություններ¹¹⁰:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ Կիպրոսի հայոց թեմը և հայկական համայնքը հայապահպանության համար խիստ կարևորում էին ազգային-կրթական կյանքի կազմակերպումը: 1920-ական թթ. կազմակերպական աշխատանքների և բարերարների նվիրատվությունների շնորհիվ ամբողջությամբ փոխվեց Կիպրոսի հայ կրթական կյանքի պատկերը, բացվեցին նոր ուսումնական հաստատություններ, կատարվեցին համապատասխան աշխատանքներ՝ մատաղ սերնդին որակյալ կրթությունով ապահովելու համար:

105 «Արաքս», 16 հունիսի, 1924, N 3, էջ 1-2:

106 Տե՛ս «Արև», 2 ապրիլի, 1926, N 2171, էջ 2: Տե՛ս նաև «Յուսաբեր», Գահիրե, 6 հունիսի, 1927, էջ 2:

107 Տե՛ս «Արև», 8 հունվարի, 1927, N 2400, էջ 2:

108 Տե՛ս Ալայոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 236-237: Տե՛ս նաև Զիպեյան Ղ., նշվ. աշխ., էջ 81:

109 «Արև», 27 նոյեմբերի, 1922, N 1154, էջ 1:

110 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 449, 459: Տե՛ս նաև «Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ թեմական կազմաւորումը», տպ.Ձ Համազգային «Վահէ Սէթեան», Նիկոսիա-Կիպրոս, 2011, էջ 199-200:

3. Կիպրոսի հայկական համայնքի հասարակական-մշակութային կյանքը

1920–1930–ական թթ. կիպրահայության համայնքային կյանքի կազմակերպման հետ աշխուժանում է նաև հասարակական կյանքը: Իրենց գործունեությունն են սկսում մի քանի հասարակական կազմակերպություններ, ակումբներ ու միություններ, որոնք հիմնականում ստեղծվել էին հենց այդ շրջանում, իսկ մի քանիսը՝ ավելի վաղ: Այդ կառույցները հիմնականում գործում էին մայրաքաղաք Նիկոսիայում և կղզու գլխավոր նավահանգիստ Լառնակայում:

Դեռևս 1913 թ. Նիկոսիայում հաստատվել էր ՀԲԸՄ մասնաձյուղը, որն իր գործունեությունը վերակազմավորում է 1920–ական թվականներին, իսկ 1929 թ. այդ կառույցի մասնաձյուղը հիմնադրվում է նաև Լառնակայում: Ի դեպ, Պետրոս Սարաձյանը 1922 թ. ստանձնել էր նաև ՀԲԸՄ Կիպրոսի մասնաձյուղի նախագահությունը¹¹¹: Նիկոսիայում գործում էին «Հայ ակումբը» (1905 թվականից), «Հայուհեաց» (1916 թվականից), «Պատանեաց» (1935 թվականից), «Սանուց–Սանուհեաց» միությունները և ՄՄԸՄ տեղական մասնաձյուղը: Լառնակայում ակտիվ էին «Հայ գրասիրաց», «Հայ ուսանողաց», «Հայ լեզուական» միությունները, երկու ընթերցարանները՝ ստեղծված 1925 և 1934 թվականներին, «Հայուհեաց միությունը», որը հսկողություն էր իրականացնում տեղի կիրակնօրյա դպրոցի նկատմամբ: Լիմասոլի փոքրիկ հայկական համայնքում էլ գործում էր «Տիկնանց միություն»-ը: 1920–1930–ական թթ. հայ ազգային կուսակցություններից կղզում ակտիվ էր ՀՅԴ-ն, որը Լառնակայում ուներ ենթակոմիտություն¹¹²:

Կիպրոսի թեմում նշվում էին ոչ միայն եկեղեցական տոները: Սարաձյան սրբազանի նախաձեռնությամբ հաճախ անդրադարձ էր կատարվում նաև ազգային տոնացույցին: Պարբերաբար հանդիսավորությամբ նշվում էր Մայիս 28-ը: Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման օրը առաջին անգամ նշվել է 1920 թ., երբ Առաջին Հանրապետությունը դեռ գոյություն ուներ: Սրբազանը տոնն «աւելի շքեղ եւ փառաւոր պանծացնելու» համար Կիպրոսում գործող ազգային կառույցներից, այդ թվում՝ ՀՅԴ ենթակոմիտության ներկայացուցիչներից, կազմում է հանձնաժողով¹¹³:

Հետագա տարիներին ևս թեմի առաջնորդի նախագահությամբ «համազգային այդ մեծ, փառաւոր տօնակատարութեան» համար տեղի կառույցների ներկայացուցիչներից՝ «Հայկական ակումբ», «Աշխատավորական միություն» և այլն, կազմվում էր հանձնախումբ՝ «...ամենուն համար նույն»

111 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն...», էջ 141:
 112 Տե՛ս Ալայօյաձեան Ա., նշվ. աշխ., էջ 239: Տե՛ս նաև Կիլիկիեան Քարգէն, Հայ Կիպրոս..., էջ 114-115, 119:
 113 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն...», էջ 87:

րական ու սիրելի եղող սոյն տարեդարձն պարտն ու պահանջքին վայել պարտաճանաչութեամբ եւ հանդիսաւորութեամբ տօնելու» համար¹¹⁴:

Հետաքրքիր է, որ հետագա տարիներին նման միջոցառումների ժամանակ չէր անտեսվում նաև Խորհրդային Հայաստանը: Անդրադառնալով Մայիս 28-ի տոնակատարության ժամանակ Սարաձյան սրբազանի ելույթին, որով դրվատանքի խոսք էր հնչել նաև Խորհրդային Հայաստանի իշխանությունների հասցեին, «Արաքսը» 1926 թ. իր համարներից մեկում գրում էր. «Հայաստանի ներկայ կառավարութեան գործունէութեան նկատմամբ գնահատական և համակրական արտայայտութիւնները յարգելի բանախօսներու կողմէն շատ լաւ տպաւորութիւն մը թողեցին բոլոր ներկաներուն վրայ»¹¹⁵:

Գործող ակումբներն ու հասարակական կառույցները հաճախ կազմակերպում էին հանրային դասախոսություններ ու քննարկումներ՝ նվիրված հայությանը հուզող հարցերին և կարևոր իրադարձություններին: Նիկոսիայի «Հայ ակումբի» կողմից հաստատված լսարանը կանոնավորապես կազմակերպում էր դասախոսություններ տարբեր թեմաներով: «Նիկոսիոյ մէջ, ամէն կիրակի տեղի կ'ունենան յաճախ երկու լսարաններ, մին եկեղեցիին ու միւսը ակումբի մէջ: Վերջնոյս մէջ ռեւէ նիւթի մասին կարելի է խօսիլ, հոն կ'ըլլայ նաեւ քաղաքական լրատուութիւն՝ ամփոփուած տեղեկատուութիւն մը աշխարհի անցուդարձներու մասին»¹¹⁶, - Նիկոսիայում կազմակերպվող լսարանների վերաբերյալ գրում է Անթիլիասի «Հասկը»:

Մեջբերումներից տեսնում ենք, որ նման միջոցառումներ կազմակերպում էր նաև եկեղեցին: Հետաքրքրական է նաև, որ «Հայ ակումբը», փաստորեն, իր գործունէության մեջ ավելի ազատ էր և կարող էր դասախոսություններ, քննարկումներ կազմակերպել ցանկացած թեմայով: 1937 թ. հունվարին կազմակերպված միջոցառումներից մեկն էլ նվիրված էր Սահակ Բ Խաչայանի գործունէությանն ու կաթողիկոսության 35-ամյակին¹¹⁷:

Կիպրահայերը յուրաքանչյուր տարի հարզանքի տուրք էին մատուցում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, այդ առթիվ մատուցվում էր պատարագ: 1932 թ. ապրիլի 24-ին Նիկոսիայի հայոց առաջնորդարանի դիմաց կանգնեցվում է Նահատակաց կոթողը՝ նվիրված Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին¹¹⁸: Նիկոսիայի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում էլ թեմի առաջնորդի նախաձեռնությամբ կառուցվում է 5 մետրանոց հուշարձան-կոթող՝ նվիրված Արարայի ճակատամարտին¹¹⁹:

114 «Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ...», էջ 209:

115 «Արաքս», 16 հունիսի, 1926, N 51, էջ 1:

116 «Հասկ», փետրվար, 1938, N 2, էջ 32:

117 Տե՛ս «Արև», 1 մարտի, 1937, N 5521, էջ 1:

118 Տե՛ս **Չէպէյան Ղ.**, նշվ. աշխ., էջ 50, 52:

119 Տե՛ս **Կիլիկիեան Բարզէն**, Հայ Կիպրոս..., էջ 100:

Կիպրոսի թեմը անմասն չէր մնում նաև Կիլիկիո կաթողիկոսության նախաձեռնած, ինչպես նաև համահայկական նշանակության տարբեր հանգանակություններին մասնակցելուց: Այսպես՝ Սահակ Բ-ի 1924 թ. օգոստոսի 24-ին հրապարակած կոնդակով այդ թվականի դեկտեմբերի 7-ը հայտարարվում է «Որբերի կիրակի»: Սրանով Կիլիկիո Աթոռը միանում է Ամերիկայի Նպաստամատույց ընկերության և ՀԲԸՄ այդ կարևոր բարեգործական նախաձեռնությանը: Նշված կոնդակն ուղարկվում է նաև Կիպրոսի թեմ, որտեղ ևս կազմակերպվում է համապատասխան հանգանակություն¹²⁰:

Հետագայում՝ 1932 թ., «Որբերի կիրակին» Բարեգործականի կողմից փոխարինվում է մեկ այլ միջոցառմամբ՝ «Մշակույթի կիրակի» անվանումով, որը նպատակ էր հետապնդում հանգանակված միջոցներն ուղղորդելու մատաղ սերնդի ազգային կրթության կազմակերպմանը: Սահմանվում էր նաև «Մշակույթի պաշտպան» կոչումը, որը տրվում էր բացառիկ կամ առնվազն երեք տարի կանոնավորապես նվիրատվություն կատարած անձանց: Սահակ Բ-ն հերթական կոնդակով հորդորում էր ակտիվ մասնակցել և իրենց նպաստը բերել այս կարևոր ձեռնարկին: «Նետո՛ք ձեր լուսնան կրթութեան գանձանակին մէջ»¹²¹, - ասված էր կոնդակում: Նվիրատվության կոչով Պետրոս Սարաճյանը դիմում է նաև Կիպրոսի հայկական համայնքներին՝ հորդորելով ջանք չխնայել այդ ուղղությամբ¹²²:

Հետևելով Սահակ Բ-ի կոնդակներին ու կոչերին՝ Կիպրոսում կազմակերպվում էին տարաբնույթ այլ հանգանակություններ, օրինակ, Լիբանանի ազգային Մամըլթեյնի հիվանդանոցի¹²³, 1932 թ. Բեյրութի հայկական «քէմբի»՝ գաղթակայանի, հրդեհից տուժածների համար¹²⁴ և այլն: Կազմակերպվում է նաև հանգանակություն ի նպաստ 1926 թ. հոկտեմբերին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժից տուժածների¹²⁵: 1936-1940 թթ. Կիլիկիո կաթողիկոսության ֆինանսական դրության և կատարված ծախսերի վերաբերյալ մի հաշվետվությունից պարզ է դառնում, որ Կիպրոսի թեմը, լինելով փոքրաթիվը Կիլիկիո կաթողիկոսության այդ շրջանի հինգ թեմերից, իր կատարած հանգանակությունների չափով երրորդն էր Հալեպի և Լիբանանի թեմերից հետո¹²⁶:

Քննարկվող ժամանակաշրջանում Կիպրոսում աշխուժանում է հրատարակչական գործը, բացվում են մի քանի հայկական տպարաններ,

120 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 124, 127-128, 400-402: Տե՛ս նաև «Արաքս», Լառնակա, 16 դեկտեմբերի, 1924, N 15, էջ 3; 1 հունվարի, 1925, N 16, էջ 2: Տե՛ս նաև «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն....», էջ 229-234:
 121 «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն....», էջ 309-310:
 122 Տե՛ս նույն տեղում, էջ 311:
 123 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի....», էջ 335:
 124 Տե՛ս նույն տեղում, էջ 353: Տե՛ս նաև «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն....», էջ 311-314:
 125 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 186:
 126 Տե՛ս «Հասկ», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1940, N 9-10, էջ 135:

սկսում են տպագրվել մի շարք հայերեն թերթեր ու ամսագրեր: Հայերեն առաջին պարբերականը Կիպրոսում լույս է տեսել դեռևս 1901 թ. «Տեղեկագիր» անվանումով: 1902 թ. ազգային կրթարան-որբանոցի տնօրեն Բակուրանը (Վ. Քյուրքճյան) Նիկոսիայում հիմնադրում է հայկական առաջին տպարանը, որը, ինչպես որբանոցը, հիմնականում գործում էր բարերարների տրամադրած միջոցների հաշվին¹²⁷: Տպարանի հիմնադրման հարցում կարևոր աջակցություն է ցուցաբերում Մխիթարյան միաբանությունը: Այս տպարանում է 1903 թ. հրատարակվել Բակուրանի հեղինակած «Կիպրոս կղզի» արժեքավոր աշխատությունը: Մի քանի տարի անց տպարանը դադարել է գործել որբանոցի փակման հետ միաժամանակ¹²⁸:

1921 թ. Կիլիկիայի հայաթափումից հետո Մարտիրոս Մոստիջյանը Մերսինից Կիպրոս՝ Լառնակա է տեղափոխում իր տպարանը: Այս տպարանում վերջինս 1924 թ. սկսեց հրատարակել «Արաքս» թերթը, որը, ցավոք, ունեցավ ընդամենը երեք տարվա կյանք: Մոստիջյանի տպարանը, բացի հայերենից, հնարավորություն ուներ տպագրելու նաև հունարենով, անգլերենով և թուրքերենով¹²⁹:

1923 թ. Լառնակայի Ամերիկյան վարժարանի հայ ուսանողներն իրենց ուսուցիչ Մանուել Քասունիի հետ հիմնադրում են «Հայախօս Միությունը», որի նպատակը «հայախօսութեան տարածումն էր հայ պատանիներու միջև»¹³⁰: Շուտով նորաբաց միությունը բացեց սեփական գրադարանը, իսկ 1925 թ. սկսեց հրատարակել «Լուսարփի» ձեռագիր ամսաթերթը, որը սկզբում պատրաստվում էր մեկ օրինակով և ընթերցվում միության անդամների համար: Սակայն 1926 թ. Քասունին կարողանում է հիմնադրել փոքրիկ տպարան, և շուրջ երեք տարի շարունակվում է «Լուսարփիի» տպագրությունը¹³¹: Հետագայում՝ 1933 թ., Քասունիի տպարանը գնում է «Լուսարփիի» գրաշարներից Մեսի Օհանյանը, որը շարունակում է տպագրական գործը¹³²:

1927 թ. Մագսուտ Մագսուտյանը տպարան է հիմնադրում Նիկոսիայում, որը ևս իր տրամադրության տակ ուներ հայերեն, նաև հունարեն ու անգլերեն տառեր: Հաջորդ տարի Մ. Մագսուտյանի նախաձեռնությամբ սկսում է լույս տեսնել «Ովասիս» գրական և գիտական ամսաթերթը: Ինչպես ամսաթերթը, այնպես էլ տպարանը, ցավոք, երկար կյանք չունեցան¹³³:

Նիկոսիայում 1932 թ. ուսուցիչ Ա.Կեպենյանը հիմնադրում է մեկ այլ տպարան, որտեղ հրատարակվում է «Հենարան» շաբաթաթերթը: Բացի

127 Տե՛ս Ազգային կրթարան-որբանոցի Կիպրոս...., էջ 2, 16:

128 Տե՛ս **Կիլիկիան Բարզեհ**, Հայ Կիպրոս...., էջ 115-116:

129 Տե՛ս Նույն տեղում, էջ 116:

130 Նույն տեղում, էջ 116:

131 Տե՛ս **Ապոստոլան Ա.**, նշվ.աշխ., էջ 239:

132 Տե՛ս **Կիլիկիան Բարզեհ**, Հայ Կիպրոս...., էջ 117, 118:

133 Տե՛ս Նույն տեղում, էջ 118: Տե՛ս նաև «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն....», էջ 288:

վերը նշված թերթերից՝ քննարկվող ժամանակաշրջանում կիպրահայոց կողմից տպագրվել են ևս երկու խմորատիպ թերթեր: Մեկը Լատնակայի «Հայ գրասիրաց միության» կողմից տպագրվող «Գրասեր» թերթն էր, որը լույս տեսավ 1923-1925 թթ., իսկ մյուսը 1922-1923 թթ. Մոստիջյանի տպարանում ընդամենը մի քանի համար տպագրված Հ. Ասլանյանի «Ազատ կիպրահայ»-ը¹³⁴: Փաստորեն, նոր կազմավորվող և փոքրաթիվ կիպրահայ համայնքում գործում էին մի քանի տպարաններ, որտեղ հրատարակված թերթերը կարևոր նշանակություն ունեցան Կիպրոսի հայության մշակութային և հասարակական կյանքում:

Այսպիսով, չնայած ոչ մեծաթիվ համայնքին՝ կիպրահայությունը ապրում էր ակտիվ հասարակական, մշակութային կյանքով: Դրանում իր դերակատարումն ուներ նաև Կիպրոսի հայոց թեմը:

4. Կիպրոսի հայոց թեմի ջանքերը որբերի և գաղթականների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ

Կիպրոսի հայոց թեմը Սարաձյան սրբազանի գլխավորությամբ կարևոր աշխատանքներ էր իրականացնում նաև Կիպրոսում հաստատված սոցիալապես ծանր վիճակում գտնվող գաղթականների և որբերի խնդիրների լուծման ուղղությամբ:

Սարաձյան սրբազանը Կիպրոսում հաստատվելուց հետո փորձում է բանակցել տեղի իշխանությունների հետ՝ Կիլիկիայից շուրջ 1750 հայ որբերի Կիպրոս տեղափոխելու համար: Կողմ անգլիական իշխանությունները համաձայնում են պայմանով, որ հայերի կողմից ապահովվեն որբերի համար անհրաժեշտ բնակարանները, սնունդն ու հագուստը: Պայման էր դրվել նաև, որ որբերը որևէ վարակիչ հիվանդություն չունենան¹³⁵: Այդ 1750 որբերից 300-ը գտնվում էին Մերսինի Ամերիկյան որբանոցի հովանու ներքո, 1100-ը՝ Ադանայի որբախնամ ընկերության, 350-ը՝ Մերսինի Բարեգործականի տեղի մասնաձյուղի¹³⁶:

Կիպրոսում դժվար էր գտնել համապատասխան մեծության շենքեր՝ այդքան որբերի տեղավորելու համար, հատկապես որ տեղի իշխանությունները չէին ցանկանում որևէ աջակցություն ցուցաբերել: Լատնակայում բողոքականները վարձել էին մի շենք՝ իրենց տրամադրության տակ

134 Տե՛ս Ալաթյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 239: «Հայ սփյուռք հանրագիտարան», ..., էջ 348:
 135 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մեղգոնեան հաստատութիւն....», էջ 70, 72:
 136 Տե՛ս նույն տեղում, էջ 77, 78, 83:

գտնվող որբերին տեղավորելու համար, սակայն անորոշ էր մնում մնացածի հարցը¹³⁷:

ՀԲԸՄ-ն ևս կարծես սկզբնական շրջանում տրամադրված էր Կիլիկիայի իր որբանոցներում գտնվող որբերի մեծ մասին տեղափոխելու Կիպրոս: Կառույցն անգամ փորձել էր բրիտանական կառավարությունից ստանալ համապատասխան թույլտվություն՝ մինչև 3000 որբեր կղզի տեղափոխելու համար¹³⁸: Պետրոս Սարաձյանը անընդհատ նամակագրական կապ ուներ ՀԲԸՄ ներկայացուցիչների հետ, որոնց հետ քննարկվում էին Կիլիկիայից հնարավորինս մեծ թվով հայ որբերի Կիպրոս տեղափոխելու հնարավորություններն ու հանգամանքները: Պետրոս սրբազանը Բարեգործականի պատասխանատուների ցուցումով անգամ համապատասխան շենքեր էր վարձել որբերին տեղավորելու համար: Սակայն Բարեգործականի հովանու տակ գործող Կիլիկիայի որբանոցների որբերն այդպես էլ Կիպրոս չտեղափոխվեցին: Նրանց մեծ մասը տեղափոխվեց Սիրիա և Լիբանան¹³⁹: Եվ միայն հետագայում Մելքոնյան վարժարանի հիմնադրումով որբերին Կիպրոս տեղափոխելու ծրագիրը մասնակիորեն իրագործվեց:

1920 թ. հունիսին Մերսինից Կիպրոս են տեղափոխվում 640 որբեր: Վերջիններս հիմնականում ամերիկյան որբանոցների սաներն էին: Նրանք տեղավորվում են Լիմասոլ քաղաքից ոչ հեռու գտնվող անգլիական զինվորների համար նախատեսված դատարկ ճամբարում: Որբերը հանձնվում են լորդ Մեյլրի անգլիական բարեգործական ֆոնդի խնամքին: Որբերի ճամբարի ղեկավարումը գտնվում էր հիմնականում հայ բողոքականների ձեռքին՝ հաճնցի Կարապետ Քեշիշյանի գլխավորությամբ¹⁴⁰:

Տեղի անգլիացի քաղաքապետի նախաձեռնությամբ ստեղծվում է կանանց խնամատարության մարմին, որը պետք է նախաձեռներ հանգանակություններ որբերի կարիքների համար¹⁴¹: Չնայած բողոքականների առարկություններին՝ Պետրոս Սարաձյանը հաճախ էր այցելում ճամբար, տեղում անցկացնում պատարագներ և մկրտություններ¹⁴²: Անհանգստանալով հայ որբերի հայեցի կրթության և հայոց եկեղեցու հովանու ներքո մեծացնելու հարցերով՝ Պետրոս սրբազանը Սահակ կաթողիկոսին հղած նամակներից մեկում հարցնում էր, թե «...արդեօք այս դժբաղդ մանուկներուն հոգետոր պետքերու եւ կրթութեան համար բան մը խորհիլ յարմար չէ՞»¹⁴³: Բնականաբար, սրբազանի մտահոգությունը հիմնականում պայմանավորված էր նրանով, որ հայ մանուկները կարող են ընկնել բողոքական

137 Տե՛ս նույն տեղում, էջ 77:

138 Տե՛ս նույն տեղում, էջ 81-82:

139 Տե՛ս նույն տեղում, էջ 123-128:

140 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի», ..., էջ 32:

141 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն...», էջ 92-93:

142 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի», ..., էջ 32:

143 Նույն տեղում, էջ 32:

նության ազդեցության տակ: Դրան կարող էր նպաստել այն հանգամանքը, որ ճամբար որպես ուսուցիչ էր հրավիրվել հայ բողոքական պատվելի Հարություն Մանուշակյանը¹⁴⁴: Նշենք սակայն, որ որբերին հովանավորող անգլիական ֆոնդը Սահակ կաթողիկոսին հղած նամակում ընդունում է այդ երեխաների՝ հայոց եկեղեցու դավանանքին պատկանելու հանգամանքը: Ուստի դեմ չէին, որ հայոց եկեղեցին ստանձնի վերջիններիս հոգևոր դաստիարակության հարցերը: Միաժամանակ կողմ էին նաև, որ որբանոց այցելեն այլ եկեղեցիների ներկայացուցիչներ¹⁴⁵: Այս որբանոցը Կիպրոսում երկար չի գործում, այլ 1921 թ. հուլիսին հովանավորող կառույցի որոշմամբ տեղափոխվում է Կ. Պոլիս:

Պետրոս սրբազանը, անհանգստանալով որբերի հետագա ճակատագրով և մասնավորապես վերջիններիս բողոքականության ազդեցության տակ ընկնելու հեռանկարով, Սահակ կաթողիկոսին գրում է. «...պիտի խնդրեի որ մասնաւորապէս պատրիարքարան (Կ. Պոլսի – Է. Հ.) հաճէիք գրել, որ քիչ մը աւելի մօտէն ուշադրութիւն դարձնէին այս որբանոցին վրայ, քանզի կատարելապէս բողոքականութեան բոյն մը եղած է...»¹⁴⁶: Կաթողիկոսը պատասխան նամակում կասկած էր հայտնում պատրիարքարանի հսկողության հնարավորության վերաբերյալ, ուստի և անիմաստ էր համարում նման նամակ գրելը: Նման պարագայում Պետրոս սրբազանը որպես իր պարտքի կատարում կաթողիկոսից թույլտվություն է հայցում անձամբ գրելու Պոլսո պատրիարքին¹⁴⁷: Պետրոս սրբազանի այս ջանքերը ցույց են տալիս, որ նա անտարբեր չէր հայ որբերի ճակատագրով և վերջիններիս հայեցի դաստիարակության հարցերով, անգամ եթէ նրանք չէին գտնվում իր հոգևոր տեսչության ենթակայության ներքո:

Նշենք նաև, որ Կիպրոսում 1920-ական թթ. գտնվում էին տասնյակ այլ որբեր, որոնց հոգածությունն անմիջապես ստանձնել էր Կիպրոսի հայոց թեմը: Կղզում հաստատված որբ երեխաները որբանոց չլինելու պատճառով հիմնականում բնակվում էին եկեղեցու վարձակալած բնակարաններում¹⁴⁸ և իրենց ուսումն անվճար ստանում էին ազգային ուսումնական հաստատություններում¹⁴⁹: Այսինքն՝ տեղի հոգևոր և ազգային իշխանություններն ուշադրության կենտրոնում էին պահում ոչ միայն որբերին խնամելու, այլ նաև ազգային կրթության և դաստիարակության հարցերը:

Հրատապ էր նաև Կիպրոսում ապաստանած գաղթականների սոցիալական խնդիրների լուծումը: Կղզում նոր հաստատվող գաղթականները հիմնականում թշվառ վիճակում էին գտնվում: Պետրոս սրբազանը և տեղի

144 Տե՛ս նույն տեղում, էջ 32:

145 Տե՛ս նույն տեղում, էջ 34-35:

146 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 41, 44:

147 Տե՛ս նույն տեղում, էջ 43-45:

148 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն...», էջ 194:

149 Տե՛ս «Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ...», էջ 202-203:

ազգային կառույցները անում էին հնարավորը՝ թեթևացնելու գաղթականների հոգսը:

1923 թ. Կիպրոսի թաղական խորհրդի կողմից ստեղծվում է աղքատախնամ մարմինը, որին էլ հիմնականում վերապահված էր գաղթականների սոցիալական խնդիրների լուծումը¹⁵⁰: Կիպրոսում, ի տարբերություն Սիրիայի և Լիբանանի, գաղթականների ճամբարներ չստեղծվեցին: Գաղթականները հիմնականում տեղավորվեցին կղզու գլխավոր քաղաքներում՝ Նիկոսիայում, Լառնակայում, Ֆամագուստայում, Լիմասոլում վարձակաված բնակարաններում: Աղքատ գաղթականների բնակարանների վարձերը վճարվում էին Կիպրոսի ազգային իշխանությունների կողմից¹⁵¹:

Սակայն միշտ չէ, որ տեղական միջոցները բավարարում էին առկա խնդիրների լուծման համար: Սարաճյան սրբազանը հաճախ էր դժգոհում միջոցների անբավարարությունից. «...Շուարած վիճակ մը ունինք գաղթականական հոսանքի հետեւանքով ի Կիպրոս պարզուած թշուառութեան պատճառաւ, միջոցներնիս անձուկ, թշուառութիւնը ծովածաւալ....», - 1923 թվականին գրում է սրբազանը Սահակ կաթողիկոսին¹⁵²:

ժամանող գաղթականների մի մասը գտնվում էր ծայրահեղ ծանր վիճակում. «...գրեթէ 800 անձեր ունինք ատուր հացի կարօտ, որ ոչ ապաստարան ունին, ոչ զգեստ եւ ոչ ալ հաց», - գրում է Սարաճյան սրբազանը 1923 թ. Եգիպտոսի առաջնորդ Թորգոմ սրբազանին, ինչպես նաև ամերիկահայ մեծահարուստ Պատրիկ Կյուլպենկյանին¹⁵³: Նույն թվականի հուլիսին Ազգային պատվիրակությանը ներկայացված Կիպրոսի վերաբերյալ վիճակագրական տվյալներում Պետրոս սրբազանը նշում է, որ կիպրահայերի 80 տոկոսը գտնվում է նյութապես «կարօտ» վիճակում¹⁵⁴:

Հետաքրքիր է, որ մի քանի տարի անց՝ 1929 թ., ՀԲԸՄ ներկայացուցիչ Վահան Մալեգյանին գրած նամակում Պետրոս սրբազանը կղզու աղքատ հայ գաղթականների թիվը նշում է 200¹⁵⁵: Փաստորեն, վերջիններիս մի մասն արդեն կարողացել էր գտնել համապատասխան աշխատանք և բարելավել սեփական կյանքը, իսկ մյուս մասն ուղղակի հեռացել էր կղզուց: Նշենք, որ տեղական իշխանությունները Կիպրոսում հաստատված գաղթականներին որևէ նպաստ չէին տրամադրում, և վերջիններիս կարիքների հոգալն ամբողջությամբ ստանձնել էին ազգային մարմինները¹⁵⁶:

Գաղթականների խնդիրները լուծելու համար անհրաժեշտ միջոցներ հայթայթելու նպատակով աղքատախնամ մարմինը պարբերաբար կազմա-

150 Տե՛ս նույն տեղում, էջ 444:

151 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», ..., էջ 77, 79:

152 Նույն տեղում, էջ 81:

153 «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն....», էջ 284:

154 Տե՛ս նույն տեղում, էջ 193: «Կիպրոսի թեմի հովուական կարգը եւ....», էջ 202:

155 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն....», էջ 167, 169:

156 Տե՛ս նույն տեղում, էջ 194:

կերպում էր հանգանակություններ, որոնցով վճարվում էին աղքատ գաղթականների տան վարձերը, ինչպես նաև տրամադրվում էր ամսական նպաստ: Համապատասխան միջոցներ հայթայթելու համար կազմակերպվում էին նաև տարաբնույթ այլ միջոցառումներ: Օրինակ՝ այդ նպատակով Պետրոս սրբազանի նախաձեռնությամբ 1926 թ. կազմակերպված մի «նուագահանդէս» էլ կյանքի է կոչվում կղզու անգլիացի կառավարչի հովանավորությամբ¹⁵⁷:

Հաճախ Պետրոս սրբազանը դիմում էր նաև Սահակ Բ-ին՝ նյութական աջակցություն ստանալու համար: Սակայն հայտնի է, որ վերջինս նույնպես գտնվում էր խիստ ծանր պայմաններում, բացի դրանից՝ Սիրիայում և Լիբանանում հաստատված գաղթականներն ավելի ծանր վիճակում էին և կարոտ ավելի մեծ ուշադրության, ինչի մասին Սահակ Բ-ն բազմիցս հիշեցնում էր Պետրոս սրբազանին հղած նամակներում: Բայց, այնուամենայնիվ, երբեմն Սահակ կաթողիկոսը որոշ օգնություն ցուցաբերում էր: Այսպես՝ 1922 թ. ուղարկելով 1000 թուրքական թղթոսկի՝ կաթողիկոսը սրբազանին հանձնարարում է դա հատկացնել կարոտյալների կարիքների բավարարմանը՝ «...առանց ցեղի ու դաւանանքի խտրութեան»¹⁵⁸: Սահակ Բ-ի հատկացրած միջոցները ուղղվում էին նաև կրթության հետ կապված խնդիրները լուծելուն¹⁵⁹: Օրինակ՝ Նիկոսիայի ազգային վարժարանի նվազալիքի համար Կիլիկիո կաթողիկոսության ջանքերով 1926 թ. եվրոպական երկրներից ձեռք են բերվում 17 երաժշտական գործիքներ¹⁶⁰:

Սարաճյան սրբազանը պարբերաբար դիմումներ է անում տարբեր ազգային գործիչների և կառույցների՝ փորձելով ստանալ համապատասխան միջոցներ: Այդ հարցով Պետրոս սրբազանը հիմնականում դիմում էր ՀԲԸՄ-ին, հաճախ ուղղակի՝ Պողոս Նուբարին և այդ կառույցի այլ ներկայացուցիչների, Ամերիկայի հայ տարագիրների նպաստից հանձնաժողովին՝ ի դեմս Վահան Քյուրքճյանի, Հայկական Կարմիր խաչին, Փարիզի ազգօգուտ հայ տիկնանց միությանը, մի շարք հայրենակցական միությունների, ինչպես նաև զանազան այլ գործիչների և հոգևորականների, մասնավորապես Եգիպտոսի թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին, ամերիկահայ մեծահարուստ Պատրիկ Կյուլպենկյանին, բարերար Կարապետ Մելքոնյանին և ուրիշների: Նշվածներից շատերը պարբերաբար տարբեր չափերի օգնություն էին ցուցաբերում¹⁶¹: Առանձին դեպքերում փոքր չափերով աջակցություն էին տրամադրում նաև հայկական կուսակցությունները¹⁶²:

157 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս սրբ. Սարաճեանի», ..., էջ 198-199:

158 Նույն տեղում, էջ 60:

159 Տե՛ս նույն տեղում, էջ 90:

160 Տե՛ս նույն տեղում, էջ 222, 225:

161 Տե՛ս «Տարագրութիւն, որբեր, Մելգոնեան հաստատութիւն...», էջ 147-153, 157, 196-198, 203, 218-221 և այլն:

162 Տե՛ս նույն տեղում, էջ 138-140:

1923 թ. հուլիսին Սարաձյան սրբազանը հերթական անգամ նամակով դիմում է ՀԲԸՄ նախագահ Պողոս Նուբարին՝ Կիպրոսում հաստատված գաղթականներին աջակցելու համար: ՀԲԸՄ գործադիր մարմնից ստացված պատասխան նամակով կառույցի պատասխանատուները պատրաստականություն են հայտնում ցուցաբերելու համապատասխան աջակցություն, սակայն ոչ թե ուղղակի նպաստ տրամադրելով, որով գումարներն արագ կփոշիացվեին, այլ առաջարկում են նախաձեռնել որևէ գործ, որը հնարավորություն կտար գաղթականներին աշխատելու սեփական գումարը: Դրանով տրամադրված նպաստը կօգտագործվեր նպատակային՝ «առանց ծուլութիւնները քաջալերելու»¹⁶³: Սարաձյան սրբազանը պատասխան նամակով առաջարկում է Կիպրոսում հիմնել 1000 անգլիական ոսկի ծախսով «ոստայնանկութեան» կամ 700 անգլիական ոսկի ծախսով «կարպետագործութեան» գործարաններ, որտեղ կարող էին աշխատել համապատասխանաբար 100 և 130 գաղթականներ: Սակայն, ցավոք սրտի, Բարեգործականը մերժում է առաջարկը՝ գործարանների հիմնադրման համար բավարար միջոցներ չունենալու պատճառաբանությամբ¹⁶⁴:

Այնուհանդերձ, տարիների ջանքերը տալիս են իրենց արդյունքը: Կարձ ժամանակ անց կարիքավոր գաղթականները կարողանում են հարմարվել կյանքի նոր պայմաններին, գտնել համապատասխան աշխատանք և վատակել սեփական ապրուստը, ինչի համար, անկասկած, դեր են խաղում նաև հայ գաղթականների աշխատասիրությունն ու ձկունությունը:

Կիպրահայ գաղութի այդ շրջանի բարեկեցության մասին էր հավաստում նաև Լառնակայի «Արաքսը». «Կիպրահայ գաղութին համար արձանագրելի ամենագոհացուցիչ բան մը, որ կայ այն ալ նիւթական-տնտեսական կացութիւնն է, որ օրէ օր կը զօրանայ»¹⁶⁵, - գրում էր թերթը 1925 թ.: Երկու տարի անց նույն թերթը փաստում էր, որ «...թէպէտ մեծապէս նեղւողները պակաս չեն, բայց մեծամասնութիւնը տնտեսապէս իրենց նախապատերազմեան վիճակին հասած է»¹⁶⁶: Սա ցույց է տալիս, որ աստիճանաբար կայունանում և բարելավվում էր Կիպրոսում հաստատված գաղթականների սոցիալ-տնտեսական կացությունը: Եվ պատահական չէ, որ 1928 թ. Կիպրոսի անգլիացի կառավարիչ Ռոնալդ Սթորսը Սահակ Բ-ին գրած նամակում հավաստիացնում էր, որ կիպրաբնակ հայերը տեղի իշխանությունների համար «ոեւէ բեռ մը չեն» և, ընդհակառակը, վերջիններս Կիպրոսի «թէ՛ օգտակար եւ թէ՛ պատուաւոր անդամներն են»¹⁶⁷:

163 Նույն տեղում, էջ 181:

164 Տես նույն տեղում, էջ 174, 185-186:

165 «Արաքս», 16 մայիսի, 1925, N 25, էջ 1:

166 «Արաքս», սեպտեմբեր-դեկտեմբեր, 1927, N 68, էջ 1:

167 «Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաձեանի», ..., էջ 408:

Այսպիսով՝ Կիպրոսի հայոց թեմը կարևոր աշխատանք էր իրականացնում կղզում հաստատված որբերի և անապահով գաղթականության սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ: Գործադրված ջանքերի շնորհիվ կիպրահայ գաղութը տարիներ անց դառնում է Սփյուռքի համեմատաբար բարեկեցիկ համայնքներից մեկը:

Եզրակացություններ

Կիպրոսի վերակազմավորված հայոց թեմի առջև ծառայած էին կղզում հաստատված գաղթականության ազգային դիմագծի պահպանության, կրթական, հոգևոր, մշակութային կյանքի կազմակերպման խնդիրները: Հրատապ էր նաև անապահով գաղթականների և կղզում հաստատված որբերի կեցության ապահովման և սոցիալական խնդիրների լուծումը:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության անմիջական հովանու ներքո Կիպրոսի թեմը կարողացավ կարևոր աշխատանք իրականացնել կղզում հաստատված հայությանը հայոց եկեղեցու շուրջ համախմբելու ուղղությամբ:

Քննարկվող ժամանակաշրջանում վերանորոգվեցին Կիպրոսի թեմի ենթակայության տակ գտնվող եկեղեցիները, ինչպես նաև կառուցվեցին նորերը: Թեև մեծ չէր թեմում ծառայող հոգևորականների թիվը, սակայն արվում էր հնարավորը ժողովրդին ավելի մոտ կանգնելու և գաղթականության շրջանում ազգային-քրիստոնեական արժեհամակարգի վրա հիմնված բարոյական նորմերի տարածման ուղղությամբ: Կիպրոսում հայոց եկեղեցին էր ստանձնել հայության ինքնության պահպանությանն ուղղված հիմնական աշխատանքները:

Մատաղ սերնդի հայեցի դաստիարակության առումով անչափ կարևոր էր ազգային-կրթական կյանքի կազմակերպումը: Կատարված աշխատանքների շնորհիվ 1920-1930-ական թթ. ամբողջությամբ փոխվեց Կիպրոսի հայոց կրթական կյանքի պատկերը: Կղզու բոլոր հայաշատ քաղաքներում բացվեցին նոր վարժարաններ և մանկապարտեզներ: Կրթական հաստատություններից ամենահեղինակավորը Նիկոսիայի Մելիքյան-Ուզունյան ազգային վարժարանն էր:

Սփյուռքացման գործընթաց ապրող կիպրահայ փոքրաթիվ համայնքում քննարկվող ժամանակաշրջանում ակտիվանում է հասարակական-մշակութային կյանքը: Հատկապես նշանակալի էր բազմաթիվ ակումբների և միությունների գործունեությունը: 1920-ական թթ. սկսեցին հրատարակվել մի շարք հայերեն թերթեր, որոնց մեծ մասը թեև երկարատև կյանք չունեցավ, սակայն կարևոր դեր խաղաց կիպրահայության հասարակական կյանքում:

1920–1930–ական թթ. Կիպրոսի հայոց թեմը՝ առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանի գլխավորությամբ, հսկայական աշխատանք կատարեց ոչ միայն ժամանող գաղթականներին կղզում հաստատվելու համար համապատասխան հնարավորություններ ստեղծելու, այլ նաև վերջիններիս սոցիալական խնդիրները լուծելու ուղղությամբ: Թեև Կիպրոս ժամանող ոչ բոլոր գաղթականներն էին սոցիալապես անապահով, սակայն կարիքավորների թիվը բավական մեծ էր: Կիպրոսի թեմը տեղի ազգային իշխանության մարմինների հետ իր գործունեության հիմնական ուղղություններից մեկը դարձրեց այդ հարցը: Կարևոր էին նաև Կիպրոսում հաստատված որբերի խնամքին ուղղված հսկայական ջանքերը: Կատարված մեծ ծավալի աշխատանքի արդյունքում անապահով գաղթականների զգալի մասը, պահպանելով սեփական ինքնությունը, արագ ինտեգրվեց հյուրընկալ երկրի հասարակական և տնտեսական կյանքին՝ միաժամանակ բարելավելով սեփական կացությունը:

Այսպիսով՝ Կիպրոսի հայոց թեմի և տեղի ազգային կառույցների համառ ջանքերի և նպատակամղված աշխատանքների շնորհիվ Կիպրոսում հաստատված գաղթականները հաջողությամբ հաղթահարեցին սփյուռքացման գործընթացը, որում հսկայական դերակատարում ունեցավ 1920–1940 թթ. Կիպրոսի հայոց թեմը ղեկավարած Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը:

Արդեն մեկ-երկու տասնամյակ անց Կիպրոսի հայությունը ներկայանում էր որպես փոքրաթիվ, բայց բավական կազմակերպված և բարեկեցիկ համայնք:

Էդգար Գ. Հովհաննիսյան – ունի շուրջ քառասուն գիտական հրատարակումներ, գիտական հետաքրքրությունների շրջանակում են Սփյուռքի պատմության, Հայրենիք–Սփյուռք հարաբերությունների, հայկական հոգևոր–կրոնական կառույցների գործունեության հարցերը, զբաղվում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության 20–րդ դարի պատմության հիմնախնդիրներով:

Էլ հասցե – hovhannisyanedgar@yahoo.com

THE EFFORTS OF THE ARMENIAN DIOCESE OF CYPRUS TO PRESERVE ARMENIAN IDENTITY AND TO SOLVE SOCIAL PROBLEMS OF ARMENIAN REFUGEES IN THE 1920-1930S

Edgar G. Hovhannisyan
Candidate of Sciences in History

Key words – The Catholicosate of the Great House of Cilicia, Armenian Diaspora, Cilicia, Armenian Diocese of Cyprus, Sahak II Khabayan, Archbishop Petros Sarajyan, Armenian refugees, orphans, preservation of the Armenian identity.

In the early 1920s, about 3500-4000 Armenian refugees from Cilicia and various settlements of Western Armenia settled in Cyprus. This completely changed the pattern of the Armenian community in Cyprus. In the mid-1920s, the Armenian Diocese of Cyprus was reorganized, and it finally transferred under the jurisdiction of the Catholicosate of the Great House of Cilicia. From 1920 to 1940 the Armenian Diocese of Cyprus was headed by Archbishop Petros Sarajyan. He played a huge role in the life of the Armenians of Cyprus. Through the efforts of Bishop Petros the community life of the Armenians of the island was reorganized, the bodies of the local national authorities were reconstructed, and the new Charter of the diocesan was approved. A new stage began in the life of the Armenian community of Cyprus.

One of the main tasks of the Armenian Diocese of Cyprus became the preservation of the national identity of the Armenian refugees settled in Cyprus, also the organization of their educational, religious and cultural life. One of the main tasks of the Armenian Diocese of Cyprus was to preserve the national identity of the Armenian refugees who settled in Cyprus, as well as to organize their educational, religious and cultural life. One of the urgent tasks was to solve the social problems and ensuring the livelihood of orphans and destitute refugees. The solution to these problems was immediately undertaken by the Armenian Diocese of Cyprus and the bodies of national authorities.

Thanks to hard efforts and the purposeful work of the Diocese of Cyprus and the national organizations of the island the Armenian refugees successfully overcame the existing challenges. Some decades later, the Armenian community of

Cyprus was a small but well-organized and prosperous community of Armenian Diaspora.

Резюме

УСИЛИЯ АРМЯНСКОЙ ЕПАРХИИ КИПРА ПО СОХРАНЕНИЮ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ И РЕШЕНИЮ СОЦИАЛЬНЫХ ПРОБЛЕМ АРМЯНСКИХ ИММИГРАНТОВ В 1920-1930-Е ГОДЫ

Эдгар Г. Оганнесян
Кандидат ист. наук

Ключевые слова - Католикосат Великого Дома Киликийского, Киликия, Армянская Диаспора, Армянская епархия Кипра, Саак II Хапаян, Петрос архиепископ Сараджян, армянские беженцы, сироты, сохранение армянской идентичности.

В начале 1920-х годов на Кипре обосновалось около 3500-4000 армянских беженцев из Киликии и различных населенных пунктов Западной Армении. Это полностью изменило структуру армянской общины Кипра. В середине 20-х годов прошлого века Армянская епархия Кипра была реорганизована и окончательно перешла под юрисдикцию Католикосата Великого Дома Киликийского. С 1920 по 1940 год Армянскую епархию Кипра возглавлял архиепископ Петрос Сараджян. Он сыграл огромную роль в жизни кипрских армян. Усилиями епископа Петроса была реорганизована общинная жизнь армян острова, реконструированы органы местной национальной власти, утвержден новый Устав епархии. В жизни армянской общины Кипра начался новый этап.

Одной из основных задач Армянской епархии Кипра было сохранение национальной идентичности армянских беженцев, поселившихся на Кипре, а также организация их образовательной, религиозной и культурной жизни. Одной из неотложных задач было решение социальных проблем и обеспечение жизнедеятельности сирот и обездоленных беженцев. Решение этих проблем было немедленно предпринято армянской епархией Кипра и органами национальной власти.

Благодаря напряженным усилиям и целенаправленной работе кипрской епархии и национальных организаций острова армянские беженцы успешно преодолели существующие трудности. Спустя несколько десятилетий армянская община Кипра стала небольшой, но хорошо организованной и процветающей общиной армянской диаспоры.

REFERENCES

1. Azgayin krt'aran-orbanots' i Kipros, Teghekagir E tareshrjani, tparan azgayin-krt'aran orbanots'i, Nikosia, 1902 (**In Armenian**).
2. **Akinean N.**, Hay Kipros, Handēs amsōreay, Hayagitakan usumnat'ert', N 6-8, hunis-ogostos, Vienna, 1937, ej 378-381 (**In Armenian**).
3. **Alpoyachean A.**, Kipros kghzin, T'eodik, Amēnun taretsoyts', 1927, P'ariz, ej 192-239 (**In Armenian**).
4. "Atanayi vkanerē ev Surb Step'anos vkayaranē. 1909 Larnaga", khmb. **Varuzhan ark'episkoposi**, Nikosia, 2010 (**In Armenian**).
5. **Bakuran**, Kipros kghzi, Nikosia, tparan azgayin krt'aran-orbanots'i", 1903 (**In Armenian**).
6. **Ch'epēean Kh.**, Yishatakarani kiprahay gaghut'i, Ant'iliyas-Libanan, tparan Kat'oghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy, 1955 (**In Armenian**).
7. **Eghiyean B.**, Zhamanakakits' patmut'iwn Kat'oghikosut'ean Hayots' Kilikioy 1914-1972, Ant'iliyas, tparan Kat'oghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy, 1975 (**In Armenian**).
8. "Hay sp'yurk' hanragitaran", Er., "Haykakan hanragitaran" hrat., 2003 (**In Armenian**).
9. Kiprosi t'emī hovuakan kargē ev t'emakan kazmaworumē, hratarakutiwn azgayin ishkanut'ean, khmb. **Varuzhan ark'episkopos**, Nikosia-Kipros, Hamazgayini "Vahē Sētean" tparan, 2011 (**In Armenian**).
10. **Kiwlēsearean Babgēn**, Hay Kipros. Hay gaghutē ev S. Makar, Ant'iliyas-Libanan, tparan Kat'oghikosut'ean Hayots', 1936 (**In Armenian**).
11. **Kiwlēsearean Babgēn**, Patmut'iwn kat'oghikosats' Kilikioy (1441-ēn minch'ew mer dōrerē), Ant'iliyas, tparan Kat'oghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy", 1990 (**In Armenian**).
12. **Sarachean Petros**, Keank'i mē payk'arē, Ant'iliyas, tparan Kat'oghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy, 1937 (**In Armenian**).
13. "Taragrut'iwn, orber, Melgonean hastatut'iwn", "Dar" himnadram, khmb. **Varuzhan ark'episkopos**, Nikosia-Kipros, tparan Kayayan publishing, 2011 (**In Armenian**).
14. "T'ght'akts'ut'iwn Sahak B. kat'oghikosi ew Petros ark'. Saracheani", "Haykakan matenashar Galust Giwlbenkian himnarkut'ean", 2010, "Kilikioy kat'oghikosut'ean arkhwiwer", N 3, khmb. **Varuzhan ark'episkopos**, Nikosia-Kipros, "Haykakan matenashar Galust Kiwlpenkian himnarkut'ean", 2010 (**In Armenian**).
15. "T'ght'akts'ut'iwn Sahak B. ew Babgēn A. kat'oghikosneru", "Kilikioy kat'oghikosut'ean arkhwiwer", N 1, khmb. **Shahinean G.**, Ant'iliyas, tparan Kat'oghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy, 1999 (**In Armenian**).
16. Ts'uts'ak hayerēn dzeragrats' Nikosiayi i Kipros, kazmets' **Akinean Nersēs**, Vienna, Mkhitarēan tparan, 1961 (**In Armenian**).